

ԻՐԱՆԱՐԱՅ ԿԵԱՆԸ

ՊԱՀՐԷՅՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԹԵՀՐԱՆԻ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

18 Օգոստոսին Թեհրանի թեմի ազգային առաջնորդարան այցելեց Իրանի մէջ Պահրէյնի դեսպան Գամալ Սալէհ ալ Սալէհ: Առաջնորդարանի մուտ-

թով հրաւիրեց առաջնորդարանը, որ Իրանի մէջ Պահրէյնի դեսպանատան մէջ դասախօսութիւն մը տալ հայկական, արարական եւ իրանական պատմական եռակողմանի յարաբերութիւններուն մասին: Յայտնենք, թէ Իրանի մէջ Պահրէյնի դեսպանը նշանակուած է դեսպան Հայաստանի մէջ եւ յառաջիկային պիտի այցելէ Երեւան իր հաւատարմագիրը յանձնելու Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանին:

կայացուած էին ճարտարապետներ Փօլ Արզարի, Գարրիէլ Գեւորգեանի եւ Վարդան Յովհաննիսեանի ճարտարապետական գործերուն լուսանկարները: Հանդիսութեան ղեկավարը կատարած է Հայաստանի ճարտարապետութեան ազգային թանգարան-հիմնարկի տնօրէն Աշոտ Գրիգորեան, որ անդրադարձած է ցուցահանդէսի կարեւորութեան, ապա «Ալիք» օրաթերթի արտօնատէր եւ Հ. Յ. Գ. Բիւրոյի անդամ ընկ. Ալլաքթի Աճէմեանը հրաւիրած է իր սրտի խօսքը ըսելու համար:



Ընկ. Ալլաքթի Աճէմեան՝ իր խօսքի պահուն:

քին դեսպանին դիմաւորեց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգիսեան:

Աւելի քան քառասուն վարկեան տեւած հանդիպման ընթացքին առաջնորդ արքան Պահրէյնի դեսպանին տեղեկութիւններ փոխանցեց Թեհրանի հայկական համայնքին մասին, ապա առաջնորդը եւ դեսպանը երկար ժամանակ քննարկեցին հայ արարական յարաբերութիւններուն, Պահրէյնի հայ համայնքին, եւ ընդհանրապէս՝ ժողովուրդներուն ու կրօններուն երկխօսութեան անհրաժեշտութեան վերաբերող հարցերը:

Իրանի մէջ Պահրէյնի դեսպանը դրուատեց Պահրէյնի փոքրամասն հայ գաղութը, մեծապէս գնահատեց Սեպուհ արք. Սարգիսեանի գիտակից կեցողութեամբ արարած ժողովուրդի դիմագրաւած հարցերուն եւ պատմութեան նկատմամբ: Ան այս առի-

ԻՐԱՆԱՐԱՅ ԵՐԵՎ ԾԱՐՍԱՐԱՊԵՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐՈՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՅԱԿԱՆԿԵՍ ԵՐԵՎԱՆԻ ՍԷՋ

Թեհրանի «Ալիք» օրաթերթը կը հաղորդէ, որ 19 Օգոստոսին Երեւանի Հայաստանի ճարտարապետութեան ազգային թանգարան-հիմնարկին մէջ կատարուած է իրանահայ ճարտարապետներու գործերու ցուցահանդէսի բացումը:

Այս ցուցահանդէսը կազմակերպած էր Իրանի Անկախութեան կեդրոնը՝ Թեհրանի հայոց թեմական խորհուրդի օժանդակութեամբ եւ Հայաստանի ճարտարապետութեան ազգային թանգարան-հիմնարկի համագործակցութեամբ:

Ցուցահանդէսին ներ-

կայացուած էին ճարտարապետներ Փօլ Արզարի, Գարրիէլ Գեւորգեանի եւ Վարդան Յովհաննիսեանի ճարտարապետական գործերուն լուսանկարները: Հանդիսութեան ղեկավարը կատարած է Հայաստանի ճարտարապետութեան ազգային թանգարան-հիմնարկի տնօրէն Աշոտ Գրիգորեան, որ անդրադարձած է ցուցահանդէսի կարեւորութեան, ապա «Ալիք» օրաթերթի արտօնատէր եւ Հ. Յ. Գ. Բիւրոյի անդամ ընկ. Ալլաքթի Աճէմեանը հրաւիրած է իր սրտի խօսքը ըսելու համար:

Ընկ. Ա. Աճէմեան իր խօսքին ընթացքին նշեց՝ «Միջկուսակցական, քաղաքական թէ տնտեսական կաշիւն ու խոր կապերու արմատաւորման վրայ իսրայիւրուած են հայ եւ իրանցի ժողովուրդներու միջեւ պատմական, եւ մասնաւորապէս՝ մշակութային կապերն ու հասարակաց եզրերը: Մեկնելով այս իրողութենէն Իրանի մէջ 1982 թուականէն կը գործէ Հայկական հարցերու ուսումնասիրութեան կեդրոն (ՀՈՒՍԿ) հաստատութիւնը»: Այնուհետեւ ան բացատրութիւններ տուեալ երեք ճարտարապետներուն մասին:

Խօսք առին նաեւ Հայաստանի մէջ Իրանի դեսպանատան հասարակութեան հետ կապերու եւ մշակութի բաժանմունքի պատասխանատուն եւ Հայաստանի քաղաքաշինութեան նախարար Արամ Արամեան:

ՔԱՂՑՐԱՆՆՉԻՒՆ ԲԱՌԵՐՈՒ ԱՂԱՐՏՄԱՆ ԴԷՄ

Հայաստան կայացած ժողովի մը ընթացքին, այլ հարցերու կարգին, խօսուեցաւ հայերէնի պաշտպանութեան եւ գտման մասին: Հետեւեալ ժամանակ Ռաֆայէլ Իշխանեանի, նշած ենք որ մեր մեծագոյն աւանդն է հայերէնը, մեր ազգային ինքնութեան անփոխարինելի պատուանդանը: Այս ազնիւ աշխատանքը պարտքն ու պարտականութիւնն է նաեւ ամէն օր ժողովուրդին հայերէն խօսք ու ըսու ջամբողջներու, անոնք ըլլան ուսուցիչ թէ բանախօս, հրապարակագիր, լրագրող, գրագէտ, պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի խօսնակ, եւ ի հարկէ՝ ծնողը:

Թող ներուի լափախսեան ճշմարտութիւն մը կրկնել: Հայերէնը հայերէն է, ինչ որ հայերէն է, հայերէն է: Այս գիտակցութեամբ պէտք է մօտենալ հայերէն ըսած եւ գրուած խօսքին: Ոսկեղնիկը, այսինքն՝ մեր մայրենին, արդիականութեան հովիտն է հետեւելով (չեմ համարձակիր այլ ձեռով բնորոշել կացութիւնը), նախարարական մեթոդներով եւ կանոններով, զոյգ աշխարհաբարներու իւրախտութիւնները, իսկ այժմ կը կատարուին բառային ներխուժում եւ թարգմանական կապուում, առանց նկատի առնելու հայերէնի իւրախտութեան բառապաշարը: Օտար բառերու նոյնութեամբ հայերէնի մէջ փոխադրութիւնը այլ խնդիր է, եւ ըստ ոմանց կը ծառայէ լեզուի հարստացման: Հարստացում, թէ աղճատում... եւ եթէ առաջընթացն է թեթեւալիկութեան, ինչպէս սովորութիւն ունինք խօսելու ծագումով հայերու մասին, օր մը մարդիկ պիտի խօսին լեզուի մը մասին որ կ'ըլլայ ծագումով հայերէն:

Փոխան վարդամատեանի, բանանք էլը փշամատեանի:

Հայաստան եւ Սփիւռք, կարծէք մոռցած են, որ ժողովները կ'ունենան նախագահ, անոնք ըլլան կրօնական, խորհրդարանական, յանձնախմբային, ծերակուտական: Խորհրդային օրերուն սովորութեամբ համար բնական էր ըսել պրեզիդենտ, այդ սովորութիւնը հետզհետէ կը կորսուի, թէեւ ուսակական դպրոցներէ շրջանաւարտներ եւ հին պահակագուհիներ կը շարունակեն աւանդութիւնը: Պրեզիդենտ տեղի կու տայ, փոխարէն սկսած է գործածուիլ, Հայաստան եւ Սփիւռք, խօսնակ բառը, եւ ուշադիր ընթացքով կը հասկնայ, որ ամերիկեան կամ անգլիական խորհրդարաններու սփիւքըն է: Ինչո՞ւ այս կապիկները թեթեւալիկութիւնը: Այս խօսնակ բառը կը թուի, թէ տպաւորիչ նորոյթ է, քանի որ նախագահութիւն եւ արտաքին գործոց նախարարութիւն ունին իրենց խօսնակները, որոնք երբեմն կը

խօսին յանուն նախագահին կամ նախարարին: Այս պարագային նախագահ-սփիւքըն չի վերաբերիլ խօսքը, այլ՝ սփիւքսմէնին, փորք-փարոյին, իսկ հայերէնը մուրացիկ չէ եւ այդ պաշտօնին համար ունի յատուկ բառեր: Վերջապէս, խօսնակ բառը սխալ չէ, բայց կը վերաբերի յատուկ պաշտօնին: Հանդէսը կ'ունենայ իր նախագահը եւ կ'ունենայ իր հանդիսավարը կամ խօսնակը, որ կ'ըսէ, թէ Մարկոսէն ետք պիտի երգէ Աշխէնը: Պատկերասփիւռը եւ ձայնասփիւռը ունին իրենց խօսնակները որոնք կը ներկայացնեն յայտագիրները: Ինչո՞ւ կը շփոթեն խորհրդարանի նախագահը կամ նախագահին բանբերը ձայնասփիւռի խօսնակին հետ:

Հայերէնի զոյգ աշխարհաբարները ունին իրենց կանոնները: Արեւմտահայերէնը ունի երկրորդ լծորդութեան բայեր որոնք կը վերջանան իլ, ինչպէս՝ խօսիլ, մարիլ, լուսցուիլ, ընդունիլ: Երբ իլ վերջաւորութեամբ բայը ո՞չ անկանոն է եւ ոչ գարտուղի, կը խոնարհուի խօսիլ բային պէս եւ պէտք է ըսել եւ գրել՝ խօսեցաւ, խօսեցաւ, հետեւաբար՝ ընդունեցաւ, ընդունեցաւ: Բայց, այս անգամ արեւելահայերէնի կապուումով կ'ըսենք եւ կը գրենք ընդունցի, ընդունց, կարծէք՝ այս բայը ըլլար առաջին լծորդութեան բայ, ինչպէս՝ երգել բայը: Միայն կը յաւերժանայ ականջի եւ վարժութեան պատճառաբանութեամբ, աւելին չըսելու համար:

Մօտաւոր անցեալին թրքաբանութիւնները կ'աղճատէին հայերէնը՝ դիւրացման կամ ականջի պատճառաբանութիւններով: Այժմ ամերիկեանը հակառակը կ'արշաւէ: Ի՞նչ դործ ունի հայերէնի մէջ նախագահիմ համաձայն ըսելաձեւը, որ ամերիկեանի ըբորտիկն է, երբ հայերէնը ունի այնքան՝ գուցայ ըստ նախագահիմ ըսելաձեւը: Եթէ վարժապետի կարմիր մատիտով լսենք եւ կարդանք, պիտի հանդիպինք յարաբերական դերանունի արշակաւանեան գործածութեան, սեռի խնդրի հայցական հոլովի անտեսման, աղճատում կ'արդարացուի՝ ըսելով, որ ականջի աւելի լաւ կը հնչէ, կարծէք հին եւ կազմաւորուած լեզու մը ականջով կը գրուի, կամ՝ այդպէս ճիշդ գրեցք մարդիկ չեմ հասկընար կամ կը կարծեն, որ մեք կը սխալիք:

Յեզ ինչպէս է հայերէնի մէջ: Ի՞նչ կը բանին ակազեմիկոսները, մեծանուն լեզուագէտները, խմբագրապետները եւ ազգի յաւերժութենէն ճառողները: Կը յիշեն Ռաֆայէլ Իշխանեանի պատգամը...

Յ. ՊԱՆԵԱՆ

ՄԵԾ ԻՐԱԿԱՐԱՐԱՌԻԹԵԱՆ BIG SALE STORES

ՇԵՏԵԻԹԵՔ BIG SALE ԴՈՒՐՔ ՀԱՍՈՒՄ 5000 ՄԵԹՐ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Թ-Ի ՇԸՐԹ 6.000 Լ.Ո.

ՆԱԳՈՒՄՏ 8.000 Լ.Ո.

ՇԱՊԻԿ 10.000 Լ.Ո.

Թ-Ի ՇԸՐԹ 10.000 Լ.Ո.

ՏԱՐԱՍ 6.000 Լ.Ո.

ԼԱՅՆԿԱՐԸ ՏԱՐԱՍ 10.000 Լ.Ո.

Թ-Ի ՇԸՐԹ 5.000 Լ.Ո.

ՍԱՆՏԱԿ 4.000 Լ.Ո.

ԿՕՇԻԿ 4.000 Լ.Ո.

ԼՈՂԱԶԳԵՍ 9.000 Լ.Ո.

Թ-Ի ՇԸՐԹ 2.000 Լ.Ո.

Թ-Ի ՇԸՐԹ 7.000 Լ.Ո.

ՆԱԳՈՒՄՏ 2.000 Լ.Ո.

- ՏԱՐԱՍ 5.000 Լ.Ո.

- ԱՆԹԵՒ ՊԼՈՒԶ 2.000 Լ.Ո.

- ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԶԵԻԻ Թ-Ի ՇԸՐԹ 10.000 Լ.Ո.

- ԳԼԽԱՐԿ 2.000 Լ.Ո.

BIG SALE BRANCHES

- * ՀԱՍՐԱ ՍԻՆԵՍ ՓԻՔՍԵԼԼԻԻ ԿԻՅ 01 / 343343
- * ՆԱՊԱԾԻԷԻ ՀՐԱՊԱՐԱԿ 03 / 949796
- * ՊԸՐԺ ՊԱՐԱԺՆԷ 03 / 678501
- * ԱՆԹԻԼԻԱՍ ՄԵՆԹՐ St. Elie 03 / 814161
- * ՄԱՐ ԷԼԻԱՍ CLASS ՎԱՏԱՍԱՍՆ ԿԻՅ 03 / 602554
- * ՅԸՐՆ ԷԼ ՇԸՊԷՔ ՍԻՆԵՍ ՍԵՍԼԱ 01 / 294090

ԱԿՆԱՐԿ

ԳԱՐՉԵԱԼ ՍԵՒՐ

Շուկեի մէջ Սեւրի դաշնագիրը վերակազմե- լու հարցերուն նուիրուած հաւաքը վստահաբար ուշադիր աչքերու եւ ականջներու հանդիպեցաւ Անգարայի մէջ: Հաւաքը քեւեւ կազմակերպուած էր քրտի գործիչի մը կողմէ, այսուհանդերձ, ըստ երեւոյթի, անհատական նախաձեռնութեան մը շատ աւելի անդին կ'երթայ, որովհետեւ բաւական լուրջի առնուած է տեղական քաղաքական շրջանակներու մէջ:

Եւրոպական խորհուրդի շուկեացի երեսփոխան Փեր Կարթոնի, ինչպէս նաեւ երկրի Ձախակողմեան կուսակցութեան եւ Կանաչներու ներկայացուցիչներու մասնակցութեամբ հարցը դուրս կը բերէ գուտ քրտական նկատառումի մը ծիրէն ու գայն կը վերածէ եւրոպական քաղաքական քաղաքական վրայ արտայայտուող երեւոյթի, որ տակաւին քաղաքական ազդակի չէ վերածուած:

Ձե վերածուած, սակայն կրնայ այդ հանգամանքը ստանալ, որովհետեւ Սեւրի դաշնագրի առաջադրանքները՝ հայերու եւ քրտներու նկատմամբ, մնացած են չիրագործուած: Իսկ իրաւատերերը, իւրաքանչիւր իր չափով ու տարողութեամբ, շրջանի քաղաքական քարտէսին վրայ իրենց ուրոյն գոյնը ունին:

Ցարդ միայն հայկական կողմը եղած է Սեւրի մասին յիշեցումներ կատարողը: Հիմա իրենց ձայնը սկսած են բարձրացնել նաեւ քրտական շրջանակները, բայց մը, որ անարձագանգ չէ մնացած Շուկեի քաղաքական շրջանակներուն կողմէ:

Մեր կարծիքով, այս երեւոյթը կը նմանի ամբարտակի մը պէթոնէ քուժման վրայ երեւցած փոքր ճեղքի մը, ուրկէ շուրջ սկսած է կաթիլկաթիլ դուրս հոսիլ: Կարելի է ծեփով ծածկել այդ ճեղքը եւ կաթիլներու հոսքը արգիլել: Սակայն, երբ քուժման գերակշռութեան է, ուրիշ տեղ մը պիտի ճեղքուի անպայման: Անգարայի «Որմնադիրները» կրնան աչ ու ծախ վազել գոյացած ճեղքերը ծեփելու համար, բայց օր մը, տեղ մը, քուժման կրնայ տեղի տալ:

Այս պահուս մեզի համար շատ կարեւոր չէ, քե թուրքի պատրաստ է Սեւրի հարցի վերաբերած թուժման դիմակայելու թէ ոչ: Մեզ շահագրգռողը այն է, որ մենք, իբրեւ ժողովուրդ եւ պետութիւն, անհրաժեշտ կամքը պիտի դրսեւորենք այդ հարցը մեր կողմէ եւս արժարձելու եւ այդ ձեւով մեր կացութիւնը ստեղծելու շրջանին մէջ:

Պետք չէ գերազանահատել Շուկեի հաւաքը, ի վերջոյ տիեզերքը ցնցող բան մը չէր: Միաժամանակ սակայն, չենք կրնար թերազանահատել հարցին եռութիւնը:

ՎԱՉԷ ԲՐՏՈՒՏԵԱՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՈԳՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ» ԿԸ ՑՈՒՑԱԴՐՈՒԻ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՉ

«Արմէնփրէս» լրատու գործակալութիւնը վերջերս յայտնեց, թէ Լոս Անճելըսի պատկերասփիւռի կայաններէն «Քէյ-Սի-Ի-Թի»-ն 9, 15 եւ 19 Օգոստոսի ցուցադրած է Հայ ժողովուրդի պատմութեան վերաբերող «Հայկական ոգիի պատկերները» վաւերագրական ժապաւէնը:

Ժապաւէնին ցուցադրութեան ընթացքին «Քէյ-Սի-Ի-Թի»-ի հաղորդավարը նկատի առնելով Քալիֆորնիոյ մէջ Հայ բնակչութեան մեծ թիւը՝ անդրադարձած է, Հայոց պատմութիւնն ու մշակոյթը Քալիֆորնիոյ բնակչութեան ծանօթացնելու կարեւորութեան: Հաղորդավարը յայտնած է նաեւ, թէ «Քէյ-Սի-Ի-Թի» ընկերութիւնը կը փափաքի իր ներդրումը ունենալ Հայ ժողովուրդի մշակութային ու պատմական արժէքներու ծանօթացման գործին մէջ՝ Հայութեան վերաբերող ժապաւէններու եւ հաղորդումներու ցուցադրութեան միջոցով:

Ըստ «Ամերիկայի Ձայն»-ին, «Հայկական ոգիի պատկերները» մէկուկէս ժամ տեւողութեամբ վաւերագրական ժապաւէնն մըն է, որուն ընթացքին ներկայացուած են Հայ ժողովուրդի ծագումն ու զարգացումը, Հայոց նշանաւոր թագուորները 19րդ եւ 20րդ դարերու կարեւոր իրադարձութիւնները եւ 1915 թուականի Հայկական Յեղասպանութիւնը:

Ժապաւէնը անդրադարձած է նաեւ ցեղասպանութեան առնչութեամբ թուրքի վարած ուղարկումի եւ ժխտումի քաղաքականութեան, ինչպէս նաեւ ցեղասպանութեան ժամանակաշրջանին Հայաստանի, անոր դրացի երկիրներուն (Վրաստան, Իրան, Թուրքիա) եւ Սփիւռքի մէջ գտնուող Հայութեան ծանր վիճակին: Նշենք, թէ «Հայկական ոգիի պատկերները» ժապաւէնը կը ցուցադրուի նաեւ Քալիֆորնիոյ Սան Ֆրանսիսքո եւ Ֆրեզնո քաղաքներուն մէջ:

ՀԱՅԵՐԸ ԹՐԲԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՆ ՄԷՉ

Նախապէս հաղորդած էինք, թէ Թուրքիոյ կրթութեան նախարար Հիւսէյն Չելիք թրքական բոլոր վարժարաններուն յղած է շրջաբերական մը՝ պահանջելով, որ աշակերտները Հայկական Յեղասպանութիւնը ուղարկող շարագրութիւններ գրեն: Օրին Չելիքի այս հրահանգը մեծ ազդու է բարձրացուցած էր Թուրքիոյ մէջ, եւ թրքական մամուլին մէջ լույս տեսած էին անոր որոշումը՝ զատապարտող յոգեւածներ, որոնցմէ քանի մը հատը թարգմանաբար հրատարակուեցան մեր էջերուն մէջ: Վերջին շրջանին Պոլսոյ Ս. Նաչդարեւանի յիսնամեակի տօնակատարութեան հրահրուած եւ ելոյթ ունեցած էր Չելիք՝ անդրադառնալով դպրոցներուն յղած իր շրջաբերականին: Ան դիտել տուած էր, թէ շրջաբերականին թիրախը Թուրքիոյ հայութիւնը, ինչպէս նաեւ արտասահմանի մէջ Թուրքիոյ ինկատամբ բարեկամութիւն տանող Հայերը չեն, այլ՝ անոնք, որոնք կը փորձեն հին խնդիրներ արծարծել եւ մթնոլորտը պղտորել...

Ստորեւ տրուած լուրին մէջ, սակայն, բոլորովին յստակ կը դառնայ, թէ իրականութեան մէջ ո՞վ կը փորձէ «մթնոլորտը պղտորել»: Լուրը կը վերաբերի յօդուածի մը, որուն մէջ թուրք յօդուածագիր մը կը ներկայանայ իբրեւ Հայկական Յեղասպանութեան մասին շարագրութիւն գրող աշակերտուհի մը: Յօդուածագիրին հեղանակաւ խօսքերը կը բացայայտեն, թէ թրքական վարժարաններուն մէջ ի՞նչ կը դասուանուի Հայերուն եւ Հայկական Յեղասպանութեան մասին՝ փարատելով ամէն կասկած, թէ Թուրք նախարարի շրջաբերականին թիրախը ամբողջ Հայութիւնն է, իսկ նպատակը՝ պատմութեան խեղաթիւրումը:

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՊԻՏԻ ՔՆՆԱՐԿՈՒԻ ԱՐՑԱԽԻ ՏԱԳՆԱՊԸ

19 Օգոստոսին տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին Հայաստանի Ազգային Ժողովի փոխ նախագահ Տիգրան Թորոսեան յայտնեց, որ Հարաւային Կովկասի խորհրդարանական նախաձեռնութեան նախագահութեան լիազուածար նիստին ընթացքին պիտի քննարկուին դարաբաղեան տազնապին առնչուող հարցեր: Ան նշեց, որ այս որոշումը տրուած է Հարաւային Կովկասի խորհրդարանական նախաձեռնութեան նախագահութեան վերջերս տեղի ունեցած նիստին ընթացքին:

Դիտել տալով, որ «ոեւէ մէկը միամտութիւնը չունի կարծեմը, թէ այդ հանդիպումին ընթացքին Հարաւային տազնապը պիտի լուծուի», Թորոսեան ընդգծեց, որ երկու երկիրներու ներկայացուցիչներուն միջեւ տեսակետներու փոխանակումը եւ առանց փոխադարձ վիրաւորանքներու հանդիպումը արդէն իսկ իրագործում մըն է:

Հանդիպումի ձեւին առնչութեամբ Ազգային Ժողովի փոխ նախագահը յայտնեց, թէ Համաձայնութիւն կայ, որ կողմերը ամէն հանդիպումէ առնուազն մէկ ամիս առաջ գրաւոր կերպով ներկայացնեն իրենց դիրքորոշումը: Այս փաստաթուղթերը պէտք է փոխանցուին միւս կողմին, ինչպէս նաեւ ներկայացուցիչներուն միջազգային փորձագէտներուն, որոնք իրենց եզրակացութիւնը պիտի յայտնեն կողմերու դիրքորոշումներուն, շփման հնարաւոր եզրերուն եւ լուծումներուն առնչութեամբ:

Տ. Թորոսեան աւելցուց, որ Հարաւային Կովկասի խորհրդարանական նախաձեռնութեան նախագահութեան նիստին հաստատուած է նաեւ կանոնակարգ՝ տարեկան երկու լիազուածար նիստեր կրնան տեւել, մասնակցութեամբ իւրաքանչիւր երկրի խորհրդարանէն 10 պատգամաւորներու, որոնցմէ երեքը մնայուն լիազուածութիւններով նախագահութեան անդամներն են: Հայաստանի Ազգային Ժողովի նախագահի կարգադրութեամբ երեք մնայուն ներկայացուցիչներ նշանակուած են, Լեւոն Մկրտչեան՝ Հ.Յ.Դաշնակցութեան, Մհեր Ծահլիճեան՝ Օրինաց Երկիրէն եւ Տիգրան Թորոսեան՝ Հանրապետական կուսակցութեան:

Անդրադառնալով այս նախաձեռնութեան հետանկարին, Տ. Թորոսեան նշեց, որ այս հանդիպումը Համազործակցութեան առաջին փուլն է, եւ Հաւանական է, որ ապագային Հարաւային Կովկասի Համազործակցութիւնը զարգանայ ու նմանի Պալթեան երկիրներու նոյնանման կառույցին:

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ» մէջ ազգային կամ անտեղական ծանուցումներ հրատարակելի փաստաթուղթերէն կը խնդրուի ծանուցումը բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազգակ» ծանուցումներու գրասենյակը:

հեզանքի ենթարկած է Թուրքիոյ կրթութեան նախարար Հիւսէյն Չելիքի հրահանգը, որ բոլոր դպրոցներու աշակերտներէն կը պահանջէր Հայկական Յեղասպանութեան գծով թրքական թէզը ներկայացնող շարագրութիւններ գրել:

Սելէկ իր շարագրութիւնը սկսած է կրթութեան նախարարութեան կողմէ պահանջուած այն հաստատումով, որ՝ «Հայերու կոտորածները մեր երկրին մէջ տեղի չեն ունեցած»: Ապա ան հարց տուած է, թէ ո՞վքեր եղած են հայերը: «Արդեօք ի՞նչպէս կը պատմեն մեր նախնիները, թրքական հեթանոսները, թրքական լեզուները ունեցող տեսակ մը երեւակայական եւ չար արարածներ են անոնք»: Սելէկ դիտել տուած է, թէ բարեբախտաբար հայերը այլեւս գոյութիւն չունին, այլապէս՝ «ինչպէս մեր պատմութեան ուսուցիչը կ'ըսէ, անոնք կը լինէին մեզ բոլորս յօշոտել»:

Թրքուհին գրած է, թէ իր պատմութեան ուսուցիչը Հայերուն մասին քաղաքական արձագանքներ ստրկեցուցած է իրեն եւ իր դասընկերներուն՝ յայտնելով, որ հայերը հարաւային Կովկասի խորհրդարանական նախաձեռնութեան նախագահութեան վերջերս տեղի ունեցած նիստին ընթացքին իր պատմութեան ուսուցիչը իրենց ստրկեցուցած է, թէ հայերը կ'ուզեն գոտեցնել թուրքերուն պնդելով, որ հայկական կոտորածներ տեղի ունեցած են, մինչդեռ Թուրք գիտնորները ոեւէ մէկը չեն սպաննած. անոնք փոքրերը կը պաշտեն եւ ծերերը կը յարգեն: Սակայն հայերը կը յարձակին յատկապէս դպրոցական տարիքի երեխաներու վրայ եւ կը բռնաբարեն զանոնք»:

Սելէկ հեզանքով շարունակած է, թէ ինչպէս գրուած է պատմութեան գիրքերուն մէջ, «Հայերու ոչ մէկ հետք գոյութիւն ունի Թուրքիոյ մէջ: Ենթադրաբար հայերուն պատկանող գիւղերուն պատմութիւնը իրականութեան մէջ կ'ու գայ հիթիթներու ժամանակաշրջանէն, որուն յաջորդած են սելճուները, ապա օսմանցիները, եւ ի վերջոյ՝ թրքական հանրապետութիւնը»:

Իր «շարագրութիւն»ը եզրափակելով՝ Սելէկ ծաղրանքի առարկայ դարձուցած է թրքական երեւակայական ցեղասպանութեան մասին թուրքերու կողմէ յաճախ կրկնուած յանդերձը՝ դիտել տալով, որ հայերն են, որ ջարդած են թուրքերը եւ՝ անոնց դէմ ցեղասպանութիւն ծրագրած: Ան դիտել տուած է, թէ Հայերն են, որ բռնաբարւած են թուրքերուն հողերը, իւրացուցած անոնց կալուածները: «Իսկ յետոյ, ինչպէս հեթանոսներուն մէջ կը պատահի, մենք հրաքով մը վերակենդանացած ենք եւ այդ ժամանակէն ի վեր այս դրախտային երկիրը մեզի կը պատկանի: Իսկ ի՞նչ եղանակով հայերն ենք ինչպէս հայեր: Անոնք քեզին, տարին քամիները, անոնք անհետացան ջուրերու հոսանքներուն մէջ», իր «շարագրութեան» աւարտին գրած է Սելէկ:

ԱՐԺԱՆԹԻՆ

ՌԻՉԸՐՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ՝ «ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ» ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԸ

Անցեալ շաբաթ «Եւր-Սի-Էլ-Էյ» Համալսարանի ամերիկահայ անուանի դասախօս եւ պատմաբան փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան այցելեց Պուլէնոս Արջոս: Ռիչըրտ Յովհաննէսեան իր կարճատեւ այցելութեան ընթացքին մասնակցեցաւ տեղւոյն «ԱՌԻ ՄՏՐԱԼ» Համալսարանին կազմակերպած «ցեղասպանութեան» գիտաժողովին:


Հրէական Ողակիզման նուիրուած առաջին նիստէն ետք, Յովհաննէսեան գիտաժողովին երկրորդ նիստին երկուցուկէս ժամ տեւողութեամբ ելոյթ մը ունեցաւ: Ան յաղորդաբար ներկայացուց «Հայեացք դէպի անցեալ» Հայկական Յեղասպանութիւնը իբրեւ 20րդ դարու զանգուածային ջարդի օրինակ՝ եւ «Հայեացք դէպի ապագայ» Հայկական Յեղասպանութեան կտակը՝ ժխտում եւ ճանաչում» գեկուցումները:

Աւելի ուշ պատմաբանը հանդիպում մը ունեցաւ Արժանթինի արտաքին գործոց եւ միջազգային առևտուրի եւ պաշտամունքի նախարարութեան մարդկային իրաւունքներու վարչութեան պետ դեսպան Քասիո Փասպիէի հետ:

Նշենք, թէ Յովհաննէս Արժանթին կը գտնուէր Պուլէնոս Արջոսի Հայ կեդրոնի մամուլի բաժինը յայտնեց, թէ Ռ. Յովհաննէսեան այցելութիւններ տուած է Հայաստանի դեսպանատուն ու արժանթինահայ շատ մը հաստատութիւններ եւ արժանթինահայ Համայնքի ներկայացուցիչներուն հետ հանդիպելով՝ ներկայացուցած է Հայաստանի առաջին եւ երրորդ հանրապետութիւններուն համեմատական վերլուծումը: Ան ելոյթ մըն ալ ունեցած է Արժանթինի ազգային բնակիչ սփռուածքի մարդկային իրաւանց մնայուն յանձնախումբին առջեւ եւ ներկայացուցած է «Հայկական Յեղասպանութիւնը» իբրեւ օրինակ մարդկութեան դէմ յանցագործութիւն: Հայերը ժխտումի դիմաց՝ նիւթով գեկուցում մը:

Այցելութեան աւարտին Պուլէնոս Արջոսի Հայ կեդրոնի մամուլի բաժինը յայտնեց, թէ Ռ. Յովհաննէսեան այցելութիւններ տուած է Հայաստանի դեսպանատուն ու արժանթինահայ շատ մը հաստատութիւններ եւ արժանթինահայ Համայնքի ներկայացուցիչներուն հետ հանդիպելով՝ ներկայացուցած է Հայաստանի առաջին եւ երրորդ հանրապետութիւններուն համեմատական վերլուծումը: Ան ելոյթ մըն ալ ունեցած է Արժանթինի ազգային բնակիչ սփռուածքի մարդկային իրաւանց մնայուն յանձնախումբին առջեւ եւ ներկայացուցած է «Հայկական Յեղասպանութիւնը» իբրեւ օրինակ մարդկութեան դէմ յանցագործութիւն: Հայերը ժխտումի դիմաց՝ նիւթով գեկուցում մը:

ԽԾԿՈՆՔԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՉԸԶԱՅՄԱՆ ՍԵՄԻՆ



60ական թուականներէն առաջ նկարուած այս լուսանկարին մէջ կ'երեւին Խժկոնքի եկեղեցիները, որոնցմէ այժմ կանգուն կը մնայ միայն Ս. Սարգիս եկեղեցին (վարի նկարը)

Թեհրանի մեր պաշտօնակից «Ալիք» օրաթերթը կը տեղեկացնէ, որ վերջերս Արեւմտեան Հայաստան ճամբորդած եւ Խժկոնքի վանքի արգիլուած տարածքը շատ կարճ ժամանակ այցելած անհատի մը միջոցով պարզուած է, թէ վանքին միակ կանգուն մնացած Ս. Սարգիս եկեղեցին, որ թուրքերուն ձեռքով բազմիցս աւերի ենթարկուած է եւ տակաւին չէ փրկուած, 1989ի երկրաշարժի ցնցումներուն պատճառով մեծ ճեղքեր ստացած է եւ խորտակման եզրին կանգնած է:

Յաւով՝ այս վանքային համալիրը Թուրքիոյ տարածքին գտնուող մշակութային հնոգեւորութիւններու նման անտէրութեան մատնուած է, իսկ Խժկոնքի վանքը ունեցած է շատ աւելի ողբալի ճակատագիր:



Նորաժամարտի Նորաժամարտի

«ԱՐԴԻ ԱՐՈՒԵՍԵՆ՝ ՅԵՂԱՇՐՁՈՂԻ ՄԸ ՏԱՆՁՈՒԱԾ ՈՒՂԵՂԻՆ ՄԷՁ»

ԱՐԴԻ ԱՐՈՒԵՍԵՆ ՄԵԿ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Ե ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԵՋ: ՅԱՅՏԱՄԴԵՍ ԳԻՐԸ ԸՆԴՆՈՒՄ Ե ԳԵՂԱՆԿԱՐԻՉԻՆ ԿՆՈՋ ՆԱՍԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿՐԱՅ ԵՒ ԿԸ ՄԻՏԻ ԱՐՅՆ ՊԱՆՍԱՅՆԵԼ՝ ԻՐԵՒ ԿՐՈՒՄ ԶԱՐԻՒԹՅԱՆ ՅԵՂԱՇՐՁՈՒՄԻՆ ՍԱՏԱՐԱԾ ԱՆՁ: ԱՆԻԿԱ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԿԸ ՆԱԵՄԱՅՆ ԸԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ. ԳՈՐԾՈՆԸ՝ ԱՐՈՒԵՍԱԳԵՏԻՆ ԱՆՁՆԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ: ԱՐՈՒԵՍԻ ԲՆԱԿԱՍ ԱՐԹԸՐ ՏԱՆԹՈ «ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍ ԹԱՅԱՋ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ ԿԸ ԳՐԸ.

«INSIDE THE TORTURED MIND OF A MODERN ART REVOLUTIONARY, HAYDEN HERRERA, FARRAR, STRAUS AND GIROUX, 768 pp., \$45

Ամերիկայի մէջ 1930ական եւ 1940ական տարիներուն արդիարարական արուեստագէտին աշխարհը երկու անիւղով տիեզերքի մը կառուցը ունէր, ինչպէս պիտի ըսէր Պրիտոն: Վերի փայլուն անիւղ Փարիզն էր, ուր «իրական» արուեստը կը ստեղծուէր, իսկ վարի անիւղ կամ քարայրը Ամերիկան էր, որ իրական աշխարհին կը ծանօթանար գլխաւորաբար սեւ ու ճերմակ աղօտ պատկերներու ընդմէջէն, որոնք լոյս կը տեսնէին «Քայլ տար»-ի նման պարբերաթերթերու մէջ: Իրական արուեստ տեսնելու վարբեր սակաւաթիւ էին. կար Նիւ Եորքի համալսարանին «Կալաթին» հաւաքածոն, որ ծանօթ էր Ապրիլ Արուեստի թանգարան անունով, կար նաեւ 1929ին հիմնուած Արդի Արուեստի թանգարանին ոչ այնքան գոհացուցիչ հաւաքածոն: Պարբերաթերթերը յաճախակի երեւոյթ չէին, սակայն անոնց միջոցով էր, որ ամերիկացի արուեստագէտներ կրնային զաղափար մը ունենալ, թէ ինչ տեղի կ'ունենար արուեստի աշխարհին մէջ, նոյնիսկ երբ ստիպուած էին երեւակայել անոնց մէջ վերարտադրուած գեղանկարներուն գունաւոր բնօրինակները: Այս նուիրեալ արդիարարական կ'ապրէին Փարիզի դպրոցին գեղարուեստական օրէնքներով, մինչեւ որ Նիւ Եորքի դպրոցը իրականութիւն դարձաւ 1950ական տարիներու սկիզբը:

Հետաքրքրական է, որ Արչիլ Կորքի ինք պի-



«Սօրս ասեղնագործուած գոգոնցը ինչպէս կը բացուի կեանքիս մէջ». 1944:

տի ըլլար Արչիլ Կորքի ինք պիտի ըլլար գեղարուեստական նոր ուղի մը որդեգրած առաջին գեղանկարիչը: Ան ինքզինք այնքան նոյնացուցած էր Փարիզի դպրոցին հետ, որ քննադատներ եւ արուեստագէտներ կ'անտեսէին զայն իբրեւ յուսահատական աստիճանի ինքնատու լեզուէն զուրկ տիպար մը՝ Նիւ Եորքի արուեստի աշխարհին մէջ, «աղմուկով ընդօրինակող մը», ինչպէս գրած է աններող քննադատ մը՝ էմիլի Չեմուլըր, Կորքիի մահէն ետք, 1951ին: Նիւ Եորքի Արդի Արուեստի թանգարանին տնօրէնը՝ Ալֆրէտ Պար ըսած է, թէ Ամերիկայի արուեստի աշխարհին կողմին օրերուն Կորքի կ'ապաւինէր եւրոպական ոճին, «սակայն հակառակ ասոր, կարելի էր շնորհապարտ զգալ վերացական եւ կիսավերացական գեղանկարչութեան մէջ անոր կատարած ուսումնասիրութիւններուն համար, այնպիսի տասնամեակի մը, որ գլխաւորաբար տարուած էր ընկերային իրապաշտութեամբ եւ ամերիկեան տեսարաններու պատկերմով»:

Արուեստի գործերու վաճառական Մամուէլ Բուր 1943ին Կորքիի մասին գրած է տեսակ մը յուսահատ համակրանքով. «Կորքի իսկական տաղանդ մըն է: Ան խելացի մօտեցում ունի իր արուեստին նկատմամբ, անոր գեղանկարչութիւնը գերազանց է, եւ ան օտուած է խոր զգացողութեամբ: Սակայն ձեւով մը երբեք չէ միաձուլուած այս տաղանդները: Ան մերթ կը հետեւի Սեզանին, մերթ կը հալածէ Փիքասոն, Միլլան կամ Լեզիւրը: Ան այնքան առնչուած է այս բոլորին հետ, որ չի կրնար Կորքի ըլլալ»: Յայտնապէս բան մը կը պակսէր Կորքիի: Հայտնի Հերբերտի գիրքը կը հիշուէ հրաշալի պատմութիւնը Կորքիի, որ կը ձերբագրուի իր կրած ազդեցութիւններէն եւ կը դառնայ եզակի իւրայատուկութեամբ ու գեղեցկութեամբ օտուած արուեստագէտ մը:

Վերացապաշտ-արտայայտչապաշտ գեղանկար-

կարչին յատկանշական կենսագրութիւնը իր գազաթնակէտին կը հասնի այնպիսի ժամանակի մը, երբ ան կը խորտակէ պատուար մը, որ տեսանելի կը դառնայ միայն, երբ փուկ կու գայ եւ կը դրսեւորէ զգայացունց նոր ոճ մը: Մինչեւ այդ ժամանակ կը թուէր, թէ վերացապաշտ-արտայայտչապաշտ շարժումին հետեւողներէն ոչ մէկը միջակ տաղանդէ մը աւելին ունէր: Ճեքսըն Փոլաք ներկ կը թափէր գետնին վրայ փռուած պատուարին երկայնքին, Ուիլիլմ տը Բուրնին կ'ուսուցէր վրձնարարութեան մեթոդները, Մարք Ռոթթօ ծփուն եւ ընդլայնող եռանկյուններ կը գծէր գոյնի դաշտերու վրայ, Ֆրանց Քլայն սեւի հաստ վրձնարարութեան կը դրոշմէր ճերմակ տարածութիւններու վրայ, Պարնէթ Նիւման երկայնք կը գործածէր՝ ծածանող ուղղահայեաց ճաղեր շինելով իբրեւ մակերես եւ գանոնք կը կոչէր «գիփ»: Կորքի այս բոլորէն աւելի օտուած էր, մասամբ որովհետեւ երկար ժամանակ մեծ արուեստագէտներու առաջնորդ եղած էր: Դժբախտաբար անոր արտասովոր իրագործումները գրեթէ անտեսանելի էին անոնց համար, որոնք Կորքիի մասին արդէն կը մտածէին իբրեւ ընդօրինակող մը, արուեստագէտ մը, որ սեփական բան մը չուներ ըսելիք: Անոնք Կորքիին պարզապէս կը նկատէին արդիարարական շարժումին մէջ «ծանօթագրութիւնը» եւ ոչ աւելին:

Կորքի 1943ին կը գեղանկարէր բաց բնութեան մէջ եւ կ'ապրէր ազարակի մը մէջ, որ կը պատկանէր իր կնոջ ընտանիքին: Հոն ան գծած է այնպիսի գեղանկարներ, որոնք տարբեր էին անոր նախկին գործերէն: Երբ զանոնք ցոյց տուած է իր կնոջ՝ Ալիսիայի, գործ ան փաղաքանքով կը կոչէր Մակուշ, հարց տուած է. «Ո՞րքէ մէկը պիտի հասնակա՞յս ասոնք: Ի՞նչ կը կարծես, ի՞նչ է ասիկա: Կը կարծես», թէ խելագար մըն եմ: Կը կարծես», թէ ասիկա գծագրութիւն է»: (Կարգացած եւ նմանօրինակ խօսակցութեան մը մասին, երբ Փոլաք իր կնոջ՝ Լի Քրասնըրի ցոյց տուած է ներկի կաթիլը իր գործերով իրագործած իր մէկ գեղանկարը եւ հարց տուած է, թէ արդեօք անիկա իրապէս գեղանկար մըն էր, եւ երկուքը միասին ուսուցի վերադարձած էին տուն):

Դժուար պիտի ըլլար կուսակցի, թէ նոր ժամանակաշրջան մը սկսած էր, թէ Կորքի իր սեփական տեսլականը կը ստեղծէր: Թէ եւ արուեստի քննադատ քլիմուրթ Կրիստոֆ կը գրէր թէ 1947ին Կորքիի գծած «Տը Բելենտըրը» (օրացոյցները) գեղանկարը լաւագոյն էր Ուիլիլմի թանգարանին այդ տարուան տարեկան ցուցահանդէսին մէջ, եւ «ամերիկացիի մը կողմէ երբեք չէր իրագործուած լաւագոյն գեղանկարներէն մէկը», սակայն բոլոր քննադատները նոյնքան հեռատես չէին եւ այդ կանուխ թուականին չէին կրնար նախատեսել, թէ յաջորդ տասնամեակին ի՞նչ պիտի պատահէր ամերիկեան գեղանկարչութեան մէջ: Կորքիի իրագործումները տեսնելէ ետք հեղանկան եզրակացութիւնը այն է, թէ մէկը, որ այնքան սերտօրէն կը նոյնացուէր Ֆրանսական գեղարուեստական արժէքներուն հետ, այնքան կարեւոր դեր պիտի խաղար Նիւ Եորքի մէջ Փարիզի դպրոցին աւարտը նշելով:

Յեղաշրջող իրագործումները բացատրելը դժուար է: Մինչեւ այսօր ոչ ոք հասկցած է, թէ ի՞նչ բան մղած է Փոլաքը յեղաշրջելու գեղանկարչութեան թեքումը: Ինչ կը վերաբերի Կորքիի, թերեւս կրնանք բանալի մը գտնել Մակուշի գրած մէկ նամակին մէջ. «Բնութիւնը մեծ ներշնչութեան մըն էր Կորքիի համար: Ան դարձեւ փոքրիկ միտնակ մը գործած էր: 6 տարեկանէն ի վեր բնութեան մէջ չէր եղած: Հոն կարողացաւ ինքզինք յայտնաբերել: Ան ստեղծեց իր սեփական աշխարհը, որ սակայն հաւասար էր բնութեան»:

Սակայն Մակուշ չէր գիտեր, թէ Կորքի իր մանկութիւնը ապուստամբ էր Հայաստանին մէջ, վանայ լիճին մօտ: Արուեստագէտը թաքուն պահած էր իր անցեալը: Անոր մահէն 10 տարի ետք Մակուշ պիտի գիտնար, թէ Կորքիի բուն անունը Ոստանիկ Աղոյեան էր: «Կորքի» անունը մըն էր, գոր ստեղծած էր արուեստագէտը: Ան ինքզինք կը ներկայացնէր իբրեւ Կոկկասի մէջ հասակ նետած ուսուցիչի որդի: Կորքիի վերապարտ էր Հայկական Յեղափոխութեանն եւ ականատես եղած էր իր սիրեցեալ մօրը մահուան: Սակայն հակառակ իր պարտած սարսափներուն, ան իտէլականացուցուցած էր իր կանուխ մանկութիւնը: Հաւանաբար վերճիւղային բնաշխարհին եւ Հայաստանի միջեւ խոր նմանութիւն կը գտնուէր: Ռապրէթ Մատրոնէլ գերիրապաշտներուն «ստեղծագործելու նախնական սկզբնակէտը» կը բացատրէր Կորքիի ապրած փոփոխութիւնը: Ան կը շեշտէր, թէ գերիրապաշտներուն եւ մանկարուն մեծ մասը: Սկիզբը Կորքի ձեւով մը ինքզինքը ազատագրուած զգաց: «Բան մը չէ՛ւ ըսած է ան Մակուշի: Ամէն ինչ ներսս է, կրնամ շարունակել»: Իրօք, ան կրնար եւ կրնայ դարձեալ գծել: Սակայն հրդեհէն քանի մը ամիս ետք կատարուած ախտաճանաչում մը ցոյց տուաւ, թէ ան կը ստատուէր քաղցկեղէն եւ ենթարկուէր ցաւ աղիքային վիրահատութեան: Ասիկա իր մէջ արթնացուց քաղցկեղէն վերադարձի վախը, սակայն հոգեբանական աւելը, որ գործուած էր, շատ աւելի մեծ էր: «Կորքիի առնականութիւնը սարսափելի հարուած ստացաւ վիրահատութեան պատճառով, գրած է Մակուշ: Եւ անոր նախանձը անհանդուրժելի դարձաւ»: Այնուհետեւ Կորքի միշտ պատրաստ եղած է բռնկելու: Իսկ գեղանկարչութիւնը, որ միշտ մղիչ ուժի արդիւնք եղած էր իրեն համար, յատուկ ստի-

ւանդ Ռոպերթօ Մաթթայի ազդեցութեան տակ է, որ «Կորքի դարձած է «Քայլ տար»-ի վերարտադրութիւնները ընդօրինակելէ եւ ապրած է իր սեփական արուեստին ամբողջական ծաղկումը»: Սակայն այդ զարգացումը տեղի ունեցած է, ինչպէս Մակուշ անդրադարձած է, բնութեան խոտերուն եւ որոմներուն մէջ: Ասիկա չի նշանակեր, թէ կը թերագնահատենք Մաթթայի դերը ապագայ բազմաթիւ վերացապաշտ-արտայայտչապաշտ գեղանկարիչներու, ներառեալ Մատրոնէլի եւ Փոլաքի արուեստը նոր ուղիւ թիւններով առաջնորդելու մէջ: Մաթթայի անոնց ստիջեցուցած է ինքնեկ մղումով գծել: Ան Կորքիի համոզած էր բեւեկնով (թրփնթրփայլ) բարակցնեւներ կը աւելի թոյլ վրձնահարուածներ կիրարկել: Կորքի կենդանական եւ բուսական ձեւերու խոտերով չհրաշալի պատկերներ կը սփռէր ծանծաղ մակերեսներու վրայ, ինչպէս՝ տեսիլքով լեցուն պարտէզներ, եւ անոնց կու տար աւելի բանաստեղծական, քան՝ տառացի վերնագրերը:

Հերբերա Մակուշի սանուկն է եւ Մակուշի նամակներն ու օրագրերը օգտագործած է Արչիլ Կորքիի պատմութիւնը պատմելու համար: Մակուշ ինքնին հրաշալիօրէն կենսունակ գրող մըն է, խանդավառ եւ խելացի կին մը, որ իր ամուսինէն 20 տարի փոքր էր: Երկուքն ալ շատ կը սիրէին զիրար, եւ պատճառ չեմ տեսներ հարցականի տակ առնելու Հերբերայի այն հաստատումը, թէ միայն բնութեան մէջ ստեղծագործելու կամ 1942ին Մաթթայի դրոշմներուն պատճառով չէր, որ Կորքի աւելի մեծ ինքնավստահութեամբ ներկը կը կիրարկէր պատուարին վրայ: Կորքիի գործերուն մէջ յառաջացած փոփոխութիւնը նաեւ արդիւնք էր ամուսնական կեանքի մէջ իր գտած բաւարարութեան եւ ապահովութեան: Մակուշի նկատմամբ անոր սէրը, հայրանալու սպասումը եւ իր գործերուն նկատմամբ իր կնոջ գնահատանքը ազատ արձակած էին անոր ձեռքերն ու սիրտը:


Սէրը, յիշողութիւնն ու գեղանկարչութեան նոր փոփոխութիւնը վերաճեաւորեցին այն, ինչ որ Կորքի թաքուն պահած էր իր ներաշխարհին մէջ, «փարիզեան արուեստի դիմաց ինքնավստահութեան իր անդրամտանքի պակասին պատճառով»: Այնուհետեւ ան պիտի գծէր ուշագրաւ կերպով ինքնատիպ գեղանկարներ, որոնք միաժամանակ հարագատ կը թուէին իրենց արդիարարչութեամբ:

Կորքի իր կենսունակ վերջին օրերուն ապրած է աղէտայի դժբախտութիւններ: Կարելի է ըսել, թէ դժբախտութեան այս ալիքներէն առաջ, եւ հակառակ իր մանկութեան օրերուն իբրեւ հայ կրած իր տառապանքներուն՝ ան բաւական ուրախ մարդ մըն էր: Բարձրահասակ էր եւ նիհար, սեւ եւ գրաւիչ տեսքով: Կիններուն համար շատ հմայիչ էր ան: Մարդիկ զայն կ'ախարհակալէին եւ առնին իր կողմէն: Ան աղքատ էր, սակայն նոյն վիճակին մէջ էին գրեթէ բոլոր արուեստագէտները, եւ իրօք, ամերիկացիներուն մեծամասնութիւնը՝ տնտեսական անկումի օրերուն: Անոր ինքզինքը կը պարտադրէր իր ներկայութեամբ եւ ունէր քաղաքապար վարուելակերպ, ինչ որ ուշագրաւ էր: Ինչ որ պատահեցաւ Կորքիի, արտաքին բան մըն էր եւ դժբախտութիւնը, որուն արժանի չէր ան: Քրննեթթիքային մէջ գոմ մը, զոր Կորքի 1946ին կ'օգտագործէր իբրեւ արուեստանոց, հրոյ ճարակ դարձաւ՝ կու տալով անոր գործերուն մեծ մասը: Սկիզբը Կորքի ձեւով մը ինքզինքը ազատագրուած զգաց: «Բան մը չէ՛ւ ըսած է ան Մակուշի: Ամէն ինչ ներսս է, կրնամ շարունակել»: Իրօք, ան կրնար եւ կրնայ դարձեալ գծել: Սակայն հրդեհէն քանի մը ամիս ետք կատարուած ախտաճանաչում մը ցոյց տուաւ, թէ ան կը ստատուէր քաղցկեղէն եւ ենթարկուէր ցաւ աղիքային վիրահատութեան: Ասիկա իր մէջ արթնացուց քաղցկեղէն վերադարձի վախը, սակայն հոգեբանական աւելը, որ գործուած էր, շատ աւելի մեծ էր: «Կորքիի առնականութիւնը սարսափելի հարուած ստացաւ վիրահատութեան պատճառով, գրած է Մակուշ: Եւ անոր նախանձը անհանդուրժելի դարձաւ»: Այնուհետեւ Կորքի միշտ պատրաստ եղած է բռնկելու: Իսկ գեղանկարչութիւնը, որ միշտ մղիչ ուժի արդիւնք եղած էր իրեն համար, յատուկ ստի-



Ծովային կեդրոնի որմնանկարի նախագիծ. 1939:

րուն մեծ մասը: Սկիզբը Կորքի ձեւով մը ինքզինքը ազատագրուած զգաց: «Բան մը չէ՛ւ ըսած է ան Մակուշի: Ամէն ինչ ներսս է, կրնամ շարունակել»: Իրօք, ան կրնար եւ կրնայ դարձեալ գծել: Սակայն հրդեհէն քանի մը ամիս ետք կատարուած ախտաճանաչում մը ցոյց տուաւ, թէ ան կը ստատուէր քաղցկեղէն եւ ենթարկուէր ցաւ աղիքային վիրահատութեան: Ասիկա իր մէջ արթնացուց քաղցկեղէն վերադարձի վախը, սակայն հոգեբանական աւելը, որ գործուած էր, շատ աւելի մեծ էր: «Կորքիի առնականութիւնը սարսափելի հարուած ստացաւ վիրահատութեան պատճառով, գրած է Մակուշ: Եւ անոր նախանձը անհանդուրժելի դարձաւ»: Այնուհետեւ Կորքի միշտ պատրաստ եղած է բռնկելու: Իսկ գեղանկարչութիւնը, որ միշտ մղիչ ուժի արդիւնք եղած էր իրեն համար, յատուկ ստի-



Վերջին տարիներուն լոյս տեսան Արչիլ Կորքիի նուիրուած երկու կենսագրութիւններ. անգլիահայ արուեստաբան Նուրիձա Մաթոսեանի «Պլէք Էյնճըլ» գիրքը, որ կը պեղեր գեղանկարչին հայկական արմատներուն ու Հայկական Յեղափոխութեան ներգործութիւնը անոր արուեստին մէջ, եւ Կորքիի երեք աղջկան՝ Մարոյի ամուսինին «Ֆրան Ե հայ փուլէս» գիրքը, որ ձեւով մը «խորտակելով» կը կառուցէր արուեստագետի տիպարը: «Տը Սիւ Եորք Թայմզ» թերթին մէջ Ռոպերթա Սմիթ կը գրէ, թէ Կորքիի նոր կենսագրութեան «Ինսայտ տը թորչըրտ մայնտ աֆ Ե մատուց արթնակալ Կորքիի կնոջ՝ Մակուշի երկրորդ ամուսինին աղջկան է եւ անոր կենսագրութիւնը «ամէնէն աւելի մանրամասնօրէն ուսումնասիրուած ու վաւերական է», թէ անոր կը պակսի դիւրաբան ռճը: «Հայտնի Երեւանի Կորքի երկար ժամանակ կը մնայ աղօտ եւ լուսարձակ դուրս, մամաւանդ գիրքին տարտամ կէտին մէջ, որ կը թուի, թէ չէ խմբագրուած», կը գրէ Սմիթ: Թէեւ Երեւան լոյս կը սփռէ որոշ գեղանկարներու վրայ, սակայն իւրաքանչիւր գեղանկարի մանրամասն պերլուծումը կ'երկարի եւ կը յանգի սովորական եզրակացութեան»: Սմիթի համաձայն, երբ Երեւան կը սկսի պատմել Կորքիի կեանքին մէջ Մակուշի դերին մասին, «պատմութեան ընթացքը կ'արագանայ եւ կը պատկերէ հարուստ ու արտասովոր կապ մը, որուն շնորհիւ ստեղծուած են հրաշալի գեղանկարներ»:

պողոթիւն մը դարձած է, որովհետեւ միակ բանն էր, որ հանգստութիւն կը պարգեւէր իրեն եւ խաղաղութիւն կը ստեղծէր տան մէջը:

Մակուշ կը փորձէր արուեստագէտի մը տիպար կ'իյնէր ըլլալ, սակայն երկուքին յարաբերութիւնը հետզհետէ կը լարուէր: 1948ին Կորքի այլ լեւ չէր գծեր, եւ անոնց յարաբերութիւնը դժոխային դարձաւ: Ցուկնային Մակուշ խոյս տուաւ երկու օր անցնելու համար Մաթթայի հետ: «Ասիկա թերեւս յուրաքանչեւ բանն էր, որ երբեք չէր ըրած եմ, բայց ըրի: Մաթթայի հետ յարաբերութիւնը մէկ հարուածով խորտակեց կեանքս», կ'ըսէ ան: Դժբախտութեանց շարքը հոս չ'աւարտիր: Քանի մը օր ետք Կորքի կ'այցելէ արուեստի գործերու վաճառական ձուլիւն Լեւիի, որ վերջը արեւը տուն կը հասցնէ: Ճամբան ինքնաշարժի գրկած մը կը պատահի եւ Կորքիի վրտակը կը կոտորի: Ան կը կորսնցնէ ալ թեւը գործածելու կարողութիւնը: Կարծէք ան միաժամանակ կորսնցուցած էր արուեստ ստեղծելու եւ սիրաբանելու իր ուժերը: Կորքի այլեւ չէր կրնար հակադրուել ինքզինք: Ան ինքզինք կ'սխալուէր 21ին: Փայտէ սնունդի մը վրայ գրեց՝ «Մնաք բարով սիրելիներ»: Ան 45 տարեկան էր, սակայն ոչ ոք գիտէ, թէ իրականութեան մէջ երբ ծնած էր: Կ'ըսէր, թէ ծնած էր Հոկտեմբեր 25ին. «Կասկած չ'ունի, թէ ինչ ո՞ւ, որովհետեւ ասիկա Փիքասոյի ծննդեան թուականն էր», կը գրէ Հերբերա:

Ծար-ը՝ էջ 8

Պատրաստեց
Լ. ԿԻՒՆՅԵԱՆ-ՄՐԱՊԵԱՆ

«ԱՐԴԻ ԱՐՈՒԵՍԸ...»

Շարունակում՝ 7րդ էջէն

Եթէ արկածը պատահած չըլլար, անտրամաբանական պիտի չըլլար այն ենթադրութիւնը, թէ դժբախտութեանց շարքը օր մը պիտի աւարտէր եւ կորքի դարձեալ պիտի կարենար գծել: Դժուար է գիտնալ, թէ արդեօք անոր ամուսնական կեանքը պիտի վերապրէ՞ր Մակուչի անհաւատարմութենէն ետք, նկատի ունենալով, որ կորքի նախանձոտ էր եւ իր կարծիքները ունէր կնոջ մը պարտականութիւններուն վերաբերեալ: Հաւանաբար անոր արուեստը պիտի խորանար եւ աւելի պիտի գեղեցկանար 1950ական տարիներուն: Մակայն յեղաշրջող մեծ իրագործումները կեանքի մէջ մէկ անգամ կը պատահին: Կորքիի համար շատ քաջալերական եղած է գերիրապաշտներուն կողմէ ընդունուիլը, մանաւանդ Պրեթոնի: Մակայն գերիրապաշտութիւնը սկսաւ նահանջել Բ. Ալիարհամարտէն ետք, իսկ կորքիի արուեստը տակաւին կը սպասէ ըննական մօտեցումի, ինչ որ նոր կեանք պիտի տայ անոր:

Ինչ կը վերաբերի կորքիի կեանքին, դժուար է երե-

ւակայն, թէ Հերերայի ուսումնասիրութիւնը գերեզանցող այլ գործ մը կրնայ յայտնուիլ մօտիկ ապագային: Չեմ կարծեր, որ Մակուչ, ինչպէս ան կը շարունակէ կոչել ինքզինքը՝ վստահաբար ի յարգանք իր շնորհալի եւ տանջուած ամուսինին, պիտի ուզէ գրել գիրք մը: Մակայն այսուհետեւ միշտ մեր տրամադրութեան տակ պիտի ըլլայ կորքիի պատմութեան Մակուչի տարբերակը: Անձամբ ուրախ եմ, որ կը ծանօթանամ իրեն՝ իր հրաշալի նամակներուն եւ յուշագրութիւններուն ընդմէջէն: Կորքի բախտաւոր էր, որ նման կին մը ունեցած է:

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'Պէյրոթի սակարահին մէջ օտար դրամանշններու փակման սակագիները' and 'Սուրիական թղթուկի'.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'ՍԱԿԱՐԱՆ' and 'ՍԱԿԱՐԱՆ'.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'ՍԱԿԱՐԱՆ' and 'ՍԱԿԱՐԱՆ'.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'ՍԱԿԱՐԱՆ' and 'ՍԱԿԱՐԱՆ'.

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀԱԼԵՊ ՀԱԼԵՊ Տ. ՍԱՀԱԿ Ա. ԶԼԵՅ. ԱՇԱԿԵՐՏԵԱՆԻ վախճանման քառասունքին առիթով, հոգեհանգրտեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 31 Օգոստոս 2003, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԻՆՎԱՐԵՐ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգրտեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 31 Օգոստոս 2003, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԷՕԺԷՆԻ ԳՈՒՅՈՒՄՏԵԱՆԻ (ծնեալ ԳԱՍԱՐՃԵԱՆ) մահուան Գ. տարեկիցին առիթով, հոգեհանգրտեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 31 Օգոստոս 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՅԼՃԱՐ ԱՅԼՃԱՐ ԼՈՒՍԻՆ ՍԼԱՊԵԱՆԻ մահուան Ե. տարեկիցին առիթով, հոգեհանգրտեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 31 Օգոստոս 2003, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱԼԻՍ ԳԱՐԱՇԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին եւ ԵՐՈՒԱՆԴ ԳԱՐԱՇԵԱՆԻ մահուան Ը. տարեկիցին առիթով, հոգեհանգրտեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 31 Օգոստոս 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5526 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

11x11 grid for crossword puzzle with numbers 1-11.

- 1. Համակարծիք - Կրկնուած գիրեր:
2. Որձեւէզ - Իգական օտար անուն:
3. Կազմիչ մասնիկ - Անգուլ, դժան:
4. Քրմապետ-Այրուբնէն:
5. Իրերալաշորդ տանոր - Առարկայ - Ճերմակ շինանիւթ (հակ.):
6. Հսկայ - Թաղիք:
7. Ճարպ - Լերան անարբել կողմը - Յուցական ածական:
8. Չղումի խօսք - Գերազանցէ՛, անցիր:
9. Ներկատու բոյս - Արական օտար անուն:
10. Ասկերանի գրեղբուն - Կողկողիթ:
11. Երկնային լուսաւոր մարմին - Տւփալ:

ԹԻԻ 5525

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

11x11 grid for crossword puzzle with numbers 1-11.

ՏԻՆՆԻ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՑ (21 Մարտէն 20 Ապրիլ) Եթէ ձեր բնական քաղաքէն դուրս կը գտնուիք, այցելեցէք ձեր գտնուած վայրին հետաքրքրական ու տեսարժան անկիւնները փոխանակ մտմտալու կամ ձանձորանալու:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) Ազգականներ, հարազատներ, զաւակներ ու բոնիկներ միասնաբար պիտի հաւաքուիք մէկ սեղանի շուրջ եւ լաւ ժամանակ պիտի անցընէք: Ընտանեկան սերը շատ կարեւոր է եւ ներշնչող:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) Ձեր տրամադրութիւնը լաւ չէ, բայց դուք պետք է ժպտուն երեւաք մարդոց դիմաց: Մարդոց դիմաց խոժոռ դէմքով նստիլը անհաճոյ բան մըն է, որմէ պետք է զգուշանալ:

ԽՆՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) Հիանալի, յաջողութիւն մը պիտի ունենաք այս իրիկուն, եթէ դուրս ելլէք ձեր տունէն: Ի՞նչ կը սպասէք: Գացէք զուարեանալու ձեր սիրելիներուն հետ:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Լաւ առիթ մը կամ աղուոր պատեհութիւն մը պիտի ծաղկեցնէ ձեր բնակը: Օրը պիտի անցնի առանց մտահոգութեան, պիտի ըլլայ ինքնավստահ ու լաւատես:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Ձեր տան մէջ փակուած մի՛ մնաք այս իրիկուն, գացէք աղուոր երեկոյթի մը, ուր բազմաթիւ անձեր պիտի հիանան ձեր, որովհետեւ պիտի ըլլաք գրաւիչ:

ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Նոյեմբեր) Այս երեկոյ իսկ գացէք տեղեկանալու այն վայրին մասին, ուր պետք է անցընէք շաբաթավերջը, եւ ուր անցած է ձեր մակնութիւնը: Օրը պիտի ըլլայ հանելի:

ԿԱՐԻՃ (24 Նոյեմբերէն 23 Դեկտեմբեր) Բարեկամ մը ձեզի պիտի բանայ իր սիրտը, պիտի պատմէ իր գաղտնիքները: Ձեր գրոյցը այնքան պիտի երկարի, որ «խօսքը խօսք պիտի բանայ», իսկ ձեր բարեկամին շքանշանը գաղտնիքներն այլ պիտի երկարին:

ԱՂԵՂՆԱՌՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Ունիք տաղտուկներ, բազմաթիւ մտահոգութիւններ, բայց եղէք քաջ, որովհետեւ շաբաթավերջը մօտեցած է, հետեւաբար ուրախութիւն պիտի բերէ իր հետ:

ԱՅԾԵՂՁԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Եթէ պատրաստուած էք արձակուրդ առնելու Սեպտեմբեր ամսուն, ձեզի կը սպասէ սքանչելի ճամբորդութիւն մը: Պատրաստուեցէք այս ուրախ առիթին համար:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար) Անակնկալ փոքր եկամուտ մը պիտի ուրախացնէ ձեզ, որովհետեւ շատ պետք ունեւիք այս գումարին: Օրը ունի նաեւ այլ բարիքներ: Վայելեցէ՛ք:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) Պիտի կարեւոր մտնալ ու մոռցնել տալ թիրիմացութիւն մը, որ ստեղծուած է ձեր ու ձեր ընկերոջ կամ սերտ բարեկամին միջեւ: Այս ձեռով գործարկեալութիւն մը պիտի ստեղծուի՝ աւելի ջերմ ու սիրալիր:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ՊԱՐ

ՊՐԱՋԻԼԵԱՆ ՍԱՄՊԼԱՅԻ ԵՐԵԿՈՆԵՐ



Պրաչիլեան աստուածուհի Եմանուէլի անունով կոչուող ճաշարանը մինչեւ Սեպտեմբեր 5 Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը կը մատուցէ պրաչիլեան պարերէն նկատուող սամպայի երեկոներ: Սամպայի դարձուցումը եւ անոնց միջեւ տիրող սուր մրցակցութեամբ հոշակաւոր երկրէն հասած պարողներու խումբ մը իրարէն արագ ձուլութեան եւ կարօտի թեմաներով պարեր կը ներկայացնէ ժամեր շարունակ:

Հարժուներ եւ սամպայի տարբեր դարձուցումներու յատուկ յանձնարարներ: Հետաքրքրական է նշել, որ այս պարախումբը իսկապէս կը մասնակցի Ռիօ Տը Ժաներոյի քառնավային: Պրաչիլեան ժողովրդային մշակոյթին

Լիբանանեան եւ պրաչիլեան խոհանոցի համադրման երկու կողմին ճաշարանը պրաչիլեան գեղարուեստի ոգին կը փոխանցէ Լիբանանի հարուստները: Պարային ցուցադրութիւնը, որ կը ներկայացուի վեց պարողներու կողմէ, կը

սկսի աւանդական պրաչիլեան - ափրիկեան Քասիլէյրա պարին շարժումներով, որոնք պարզացած են նախկին փորձուկայի գերիներու հաւաքականութեան կողմէ: Այս պարին կ'ընկերակցին թմբուկներ եւ հիւսիսարեւելեան Պրաչիլի տիպիկ միայր պերիմպաօ գործիքը:

Տպաւորիչ է սամպայարին յատուկ աւանդական տարապնէրով զգեստաւորուած պարախումբը նաեւ կը ներկայացնէ Ռիօ Տը Ժաներոյի քառնավայիններուն մէկ անկիւնը յիշեցնող տեսարաններ՝ պարի արագ ու ձապուկ

մէկէ աւելի երեսները մատուցող այս երեկոները մեծ ընդունելութիւն կը գտնեն լիբանանցիներու կողմէ, որոնք սերտ կապեր ունին իրենց մեծագոյն գաղութներէն մէկը նկատուող այս երկրին հետ:

ՕԳԵՐԵՈՒՅԹ



ԵՐԵՇՇԱԲԹԻ, 10 ՕԳՈՍՏՈՍ 2003 ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵԿ՝ 31°C ԳԻՇԵՐ՝ 22°C ԽՈՆԱՒՈՒԹԻՒՆ՝ 72%

ԱՉԳԱԿ 50 ՏՄԱԻ ԿՈՒՆԱԶ 29 ՕԳՈՍՏՈՍ 1953

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

ՊԻՏԻ ԳՈՅԱՆԱՅ 100,000Ը

Հ. Մ. Ը. Մ. կը բաղէ իր վայելած լայն ու անվերապահ ժողովրդակալութեան պտուղները նաեւ այս անգամ, իր հրապարակային մեծ նուիրահաւաքին առիթով: Քաղած է անուրիշ առիթներով ալ եւ արժանացած է միշտ իր անհամար բարեկամներուն նիւթական ու բարոյական ինքնաբերական քաջալերանքին:



Լիբանանի մէջ Հ. Մ. Ը. Մ. փանուցող հրապարակ իջեցը կը նշանակէ ի յառաջագուցէ պահովուն ճակատի որեւէ մէկ ձեռնարկին յաջողութիւնը: Առաջին քայլին իսկ գործի մը կ'էսը իրագործած կ'ըլլայ: Իսկ միւս կէսն ալ կ'ամբողջանայ կարեւոր ժամանակի ընթացքին եւ առանց դժմաւորութեան: Այս այսպէս է, որովհետեւ Հ. Մ. Ը. Մ. անուն ունի, վարկ ունի, իբրեւ հայկերաւոր միջնորդներու նուիրած կազմակերպութիւն, ամբողջ գաղութիւն մէջ: Եւ այդ անունն ու վարկը ապահովուած են տարիներու մեղուաջան աշխատանքներով իր վարիչներու կորովի գործունեութեամբ, իր պատանեկան ու երիտասարդական շարքերու յարատեւ նիւթերով եւ փայլուն յաջողութիւններով:

Աստուած, կ'ըսէ ժողովրդական իմաստութիւնը, ինք կը տեսնէ եւ ապ ծնունդ կը դնէ անոր վրայ: Ճիշդ այս րատիկ մտահոգութեամբ, ժողովուրդը կը տեսնէ Հ. Մ. Ը. Մ. փոքրը եւ ըստ այնմ կը տրամադրէ անոր իր ամբողջական օժանդակութիւնը, (Հատուած)

ԱՅՍՕՐ 29 ՕԳՈՍՏՈՍԻՆ

- 1903.- Սահ Իսախանի:
1985.- ՍԱԿի մարդկային իրաւանց ենթայանձնախումբը կ'որոգորդուի ՊԵՆ Ուիթթերի պատրաստած տեղեկագիրը, որուն 24րդ պարբերութիւնը կը վերաբերի Հայկական Յեղասպանութեան:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Ն



ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի ՖՈՒԹԿՈՒԼԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ԲԱՆԱՆՑ ԵՒ ՇԻՐԱԿ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ

ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի ՖՈՒԹԿՈՒԼԻ մրցաշարքին Ա. Հանգըր-
լանդի դարձի մրցումներուն, երէկ Հայաստանի եր-
կու ներկայացուցիչները Բանանց Երեւան եւ Շիրակ
Գիւմրի իրենց դաշտերուն վրայ պարտութիւն կրելէ
ետք իրենց մրցակիցներէն դուրս մնացին մրցաշարքէն:
Շիրակ 2-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց դանիա-
կան Ֆարուս Նիուսէլանտէն (երթ՝ 4-0, ի նպաստ Ֆա-
րուսի), մինչ Բանանց պարտուեցաւ Հափոնէլ Թէյ Աւիւն
(Խորալէ)՝ 2-1: Երթին, Հափոնէլ 1-1 արդիւնքով Հաւա-
սարուսթիւն մը արձանագրած է Բանանցի Հետ: Երէկ
տեղի ունեցած այս մրցումին Բանանցի կողմ նշանա-
կեց՝ Ամիրեան (75րդ):

ՆԻՒՔԵՍԸ ԵՒ ՊՈՐՈՒՄԻՍ ՏՈՐՈՒՄՈՒՆՏ —
ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ.

«ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»Ի ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆԸ

«ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»ի Ֆուտբոլի մրցաշարքին զտուժի
Գ. Հանգըրլանդի դարձի մրցումներէն ետք, երէկ Մոնա-
քոյի մէջ տեղի ունեցաւ Ա. Հանգըրլանդի մրցումներուն
վիճակագրութիւնը, որ տեղի պիտի ունենայ խմբակնե-
րու դրութեամբ: 32 խումբերը բաժնուած պիտի ըլլան
ու թ խմբակի, իւրաքանչիւրը՝ չորս խումբ:

Գ. Հանգըրլանդի դարձի մրցումներուն, մեծագոյն
անակնկալները ստեղծեցին Ֆ. Բ. Պրիւս եւ Փարթիզան
Պելլրատ, որոնք մրցաշարքէն դուրս ձգեցին յաջորդա-
բար Պորուսիա Տորթմունտը եւ Նիւքէմբըր, իրենց յաջ-
թանակները արձանագրելով... փենսլիմներով (4-2 եւ
4-3):

Երէկ, տեղի ունեցած վիճակագրութեան ընթացքին,
Պայերն Միւնխի, որ մաս կազմեց Ա. խմբակին, իրեն
մրցակից պիտի ունենայ Լիոնը եւ իր նախկին մարզիկ՝
պրազիցի ձիւլանի էլպէրը, որ երկու օր առաջ միա-
ցաւ Ֆրանսական կազմին:

Մարսէլ, որ ֆրանսական միակ խումբն ըլլալով տի-
րացած է այս տիտղոսին, մաս կը կազմէ 2. խմբակին,
իր դէմ պիտի ունենայ Ռէալ Մատրիտը:

Ա. Հանգըրլանդի մրցումները պիտի սկսին յառաջի-
կայ Սեպտեմբեր 16ին եւ 17ին:

Ստորեւ՝ վիճակագրութիւնը.

Ա. ԽՄԲԱԿ
Պայերն Միւնխի (Գերմանիա), Լիոն (Ֆրանսա),
Մելիթ (Սլովակիա) եւ Անտրլիքթ (Պելլրատ)

Բ. ԽՄԲԱԿ
Արսենալ (Անգլիա), Ինթեր Միլան (Իտալիա), Տի-
նամօ Բիւն (Ուրուգուայ) եւ Լոքոմոթիւ Մոսկուա
(Ռուսիա)

Գ. ԽՄԲԱԿ
Տեփորթիօ Բորուս (Սպանիա), Փ. Ս. Վ. Այնտհո-
վըն (Հոլանտա), ԱէՔ Արսէն (Յունաստան) եւ Մոնա-
քո (Ֆրանսա)

Դ. ԽՄԲԱԿ
Եուրոպէս (Իտալիա), Կալաթարապ (Թուրքիա),
Օլիմպիկա (Յունաստան) եւ Ռեալ Մոսկուա
(Սպանիա)

Ե. ԽՄԲԱԿ
Մանչեսթըր Եուրոպէս (Անգլիա), Փանթիֆալ-
ըն (Յունաստան), Ռէյնըրդ (Սլովակիա) եւ Շքուր-
կարթ (Գերմանիա)

Զ. ԽՄԲԱԿ
Ռեալ Մատրիտ (Սպանիա), Փորթո (Փորթուգալ),
Մարսէլ (Ֆրանսա) եւ Փարթիզան Պելլրատ (Սերպիա)

Է. ԽՄԲԱԿ
Լացիօ Ռոմա (Իտալիա), Չելսի (Անգլիա), Սփարթա
Փրակա (Չեխիա) եւ Պեշիքթաշ (Թուրքիա)

Ը. ԽՄԲԱԿ
Ա. Սէ. Միլան (Իտալիա), Սելթա Վիլո (Սպանիա),
Այաքս Ամսթերտամ (Հոլանտա) եւ Ֆ. Բ. Պրիւս (Պել-
լրատ)

Ստորեւ՝ առաջին օրուան մրցումներուն յայտագի-
րը.

ԵՐԵՎԱՆԻ, 16 ՍԵՊՏԵՄԵՐ

Ե. ԽՄԲԱԿ
Ռէյնըրդ (Սլովակիա) - Շքուրկարթ (Գերմանիա)
Մանչեսթըր Եուրոպէս (Անգլիա) - Փանթիֆալըն
(Յունաստան)

Զ. ԽՄԲԱԿ
Ռեալ Մատրիտ (Սպանիա) - Մարսէլ (Ֆրանսա)
Փարթիզան Պելլրատ (Սերպիա) - Փորթո (Փորթու-
գալ)

Է. ԽՄԲԱԿ
Սփարթա Փրակա (Չեխիա) - Չելսի (Անգլիա)
Պեշիքթաշ (Թուրքիա) - Լացիօ Ռոմա (Իտալիա)

Ը. ԽՄԲԱԿ
Սեալ (Իտալիա) - Այաքս Ամսթերտամ (Հո-
լանտա)

Ֆ. Բ. Պրիւս (Պելլրատ) - Սելթա Վիլո (Սպանիա)

ՉՈՐԵՅԱՐԹ, 17 ՍԵՊՏԵՄԵՐ

Ա. ԽՄԲԱԿ
Լիոն (Ֆրանսա) - Անտրլիքթ (Պելլրատ)
Պայերն Միւնխի (Գերմանիա) - Մելիթ (Սլովակիա)

Բ. ԽՄԲԱԿ
Տինամօ Բիւն (Ուրուգուայ) - Լոքոմոթիւ Մոսկուա
(Ռուսիա)

Արսենալ (Անգլիա) - Ինթեր Միլան (Իտալիա)

Գ. ԽՄԲԱԿ
ԱէՔ Արսէն (Յունաստան) - Տեփորթիօ Բորուս
(Յունաստան)

Փ. Ս. Վ. Այնտհոլվըն (Հոլանտա) - Մոնաքո (Ֆրանսա)

Դ. ԽՄԲԱԿ
Եուրոպէս (Իտալիա) - Կալաթարապ (Թուրքիա)

Ռեալ Մոսկուա (Սպանիա) - Օլիմպիկա (Յուն-
աստան)

ԵՆՈՒ. ԷՍ. ՕՓԸՆ

ՍԱՐԳՍԵԱՆ ՅԱՂԹԵՑ, ԻՍԿ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱԲ



Սարգիս Սարգսեան

Միացեալ Նահանգնե-
րու մէջ տեղի ունեցող
ԵՆՈՒ. ԷՍ. ՕՓԸՆԻ կրան շլէ-
մի թենիսի միջազգային
մրցաշարքին Ա. Հանգըր-
լանդի իր կատարած
մրցումին, հայրենի մար-
զիկ Սարգիս Սարգսեան
երէկ յաղթանակ մարձա-
նագրեց, երբ բաւական
մեծ պայքարէ ետք 4-6, 6-
3, 6-7, 6-2 եւ 7-5 արդիւն-
քով պարտութեան մատ-
նեց ամերիկացի իր մրցա-
կիցը Էմըր Տելիսը:

Սարգսեան, որ եօթնե-
րորդ անգամ ըլլալով իր
մասնակցութիւնը կը բե-
րէ ԵՆՈՒ. ԷՍ. ՕՓԸՆԻ, Բ.
Հանգըրլանդի պիտի ճա-
կատիայլամերիկացի մը՝
ձէյմս Պլէքի դէմ, որ Ա.
Հանգըրլանդի իր կատա-
րած մրցումին 7-6, 6-3 եւ
6-2 արդիւնքով պարտու-
թեան մատնեց 27րդ դաս-
ւած արժանիքիցի Մա-
րիանօ Չապալիթան:

32րդ դասուած գու-
ցերիահայ Մարի - Գայիա-
նէ Միքայէլեան դուրս
մնաց մրցաշարքէն, երբ Բ.
Հանգըրլանդի իր կատա-
րած մրցումին 7-5 եւ 6-4
արդիւնքով պարտութիւն
մը կրեց ճափոնցի Սարի
Օպաթայէն:

Ստորեւ՝ աղջկանց եւ
տղոց մրցաշարքին, Ա. եւ
Բ. Հանգըրլանդներուն ար-
ձանագրուած կարեւորա-
գոյն մրցումներուն ար-
դիւնքները:

ԱՂՋԻԿՆԵՐ



Օպայեա

Բ. ՀԱՆԳՐՈՒՆ 7-5
Սարի Օպայեա (ձա-
փոն) - Մարի - Գայիանէ
Միքայէլեան (Ջուրիցե-
րիա, 32րդ) 7-5 եւ 6-4

Մարի Փիրս (Ֆրանսա)
- Ելենա Տոքիչ (Սերպիա,
22րդ) 6-2, 6-7 եւ 7-6

Այի Սուկիամա (ձա-
փոն, 15րդ) - Վիթիմի
Ռազանօ (Ֆրանսա) 1-6,
6-3 եւ 6-3

Քիմ Կլիսթըրը (Պել-
լրատ, առաջին) - Լորա
Կրանվիլ (Մ. Ն.) 6-1 եւ 6-
1

Ալիսիա Մոլիք (Աւստը-
րալիա) - Բոնէլիթա Մար-
թիեա (Սպանիա, 12րդ) 7-
5 եւ 6-4

Մելիցոտ Սզիմը
(Հունգարիա) - Լիզա Ռէյ-
մըն (Մ. Ն., 28րդ) 4-6, 6-4
եւ 6-1

Ամանտա Քեոքըրը
(Հարաւային Աֆրիկէ,

14րդ) - Պարպարա Շէք
(Աւստրիա) 3-6, 7-5 եւ 6-2

Լիցոսէյ Տէլմիորը
(Մ. Ն., 3րդ) - Մար-
իա Էլենա Քամբ-
րից (Իտալիա) 6-2
եւ 6-4

Վերա Ջվոնա-
րեւա (Ռուսիա,
13րդ) - Էլիշ Լարր-
լըրոտ (Մ. Ն.) 6-3,
4-6 եւ 6-1

Նատիա Փեթրո-
վա (Ռուսիա,
19րդ) - Տեմիսա
Շլատրովա (Չե-
խիա) 6-1 եւ 6-2

Սվետլանա
Քուզնեցովա
(Ռուսիա, 27րդ) -
Փեթրա Մանտիլա
(Հունգարիա) 6-3
եւ 6-3

Մելիան Տոկնե-
սի (Մ. Ն., 17րդ) -
Մարա Մարիպի
(Սլովակիա) 6-3 եւ

10րդ) - Մարիա Ակսիչ
(Խրուաթիա) 3-6, 6-3, 5-
7, 6-2 եւ 6-2

Ժան - Ռընէ Լիսնար
(Ֆրանսա) - Մակնուս
Նորմըն (Շուէտ) 6-2, 6-2,
6-7, 0-6 եւ 7-6

Նիքոլա Մասսիլ (Չի-
լի) - Կաստրո Կուստիօ
(Արժանթին, 30րդ) 6-3, 6-
3 եւ 6-2

Եարթո Նայմիլըն
(Ֆիլիպին) - Նիքոլա
Մանի (Ֆրանսա) 6-2, 6-
4 եւ 7-5

Ռաֆայէլ Նատալ

Փաուլա Սուա-
րեւա (Արժանթին,
24րդ) - Միլակրոս
Սեքուերա (Վե-
նեզուելա) 6-1 եւ
6-0

Տղայք
ՆԱՅԻՆ
ՀԱՆԳՐՈՒՆ
Սարգիս
Սարգսեան (Հա-
յաստան) - Էմըր
Տելիք (Մ. Ն.) 4-6,
6-3, 6-7, 6-2 եւ 7-5

ձէյմս Պլէք (Մ.
Ն.) - Մարիանօ
Չապալիթա (Ար-
ժանթին, 27րդ) 7-
6, 6-3 եւ 6-2

Քարլոս Մոյա
(Սպանիա, 7րդ) -
Սքոթ Տրեփըր (Աւստրա-
լիա) 4-6, 6-4, 7-5 եւ 7-6

Ժան - Մայքըլ Կամպիլ

Ֆերերօ
(Սպանիա) - Ֆեռնանտօ
Վիչենթէ (Սպանիա) 6-4,
6-3 եւ 6-3

Բ. ՀԱՆԳՐՈՒՆ
Փարատորն Սրիշա-
փան (Թայլանտ, 11րդ) -
Տոմիթիք Հրպարթի (Սլո-
վակիա) 6-4, 6-4 եւ 6-3

Լէյթրըն Հուլիք (Աւստը-
րալիա, 6րդ) - Հիւնկ Թա-
նիք Լի (Հարաւային Բո-
րեա) 5-7, 6-2, 6-2 եւ 6-4

Խուան Իկնասիօ Շելա
(Արժանթին) - Թոմաս
Պերտիչ (Չեխիա) 2-6, 6-
1, 6-4 եւ 6-3

Ֆեռնանտօ Վերապօ
(Սպանիա) - Տալիա Սան-
կուիների (Իտալիա) 7-6,
7-6, 4-6 եւ 6-3

ԱՌԼԵԹԻՉՄԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐ ԽԼԵՑԻՆ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Մէն Տընիի մէջ
(Ֆրանսիա) տեղի
ուսանող Աթլետիկ-
մի աշխարհի 9րդ
ախոյանութեան
վեցերորդ օրուան
մրցումներուն
Քուպա, Իտալիա
եւ Աւստրալիա
երէկ շահեցան
իրենց առաջին ոս-
կի մետալները,
մինչ Միացեալ Նա-
հանգները յաջողե-
ցան տիրանալ
իրենց չորրորդ ոս-
կի մետալին եւ
Ռուսիայէն խլել
մետալներու ընդ-
հանուր դասաւոր-
ման պարագլուխի
դիրքը:



Ճիւստիէ

Ստորեւ՝ երէկ
տեղի ունեցած
մրցումներուն ար-
դիւնքները:

ՉՈՂՈՎ ԲԱՐՉՐՈՒԹԻՒՆ ՅԱՍԿԵԼ

ՏՂԱՔ
1.- Ճիւստիէ Ճիւլիք (Իտալիա) 5,90 մ.
2.- Օքէրթ Պրիթց (Հար. Աֆրիկէ) 5,85 մ.
3.- Փաթրիք Քրիսթիանսըն (Շուէտ) 5,85 մ.

200 ՄԵՏՐ ՎԱԶՔ

ԱՂՋԻԿՆԵՐ
1.- Քելի Ուայթ (Մ. Ն.) 22" 05
2.- Անասթասիա Քափաշինսքայա (Ռուսիա) 22" 38
3.- Թորի Էտուրնո (Մ. Ն.) 22" 47

ՄՈՒՐԳ ՄՐՇԱԿԵԼ

ԱՂՋԻԿՆԵՐ
1.- Երիկ Մորենօ (Քուպա) 73,33 մ.
2.- Օլիա Քուզնեցովա (Ռուսիա) 71,71 մ.
3.- Մանուէլա Մոնթեպրիւն (Ֆրանսա) 70,92 մ.

400 ՄԵՏՐ ՄՐՇԱԿԵԼ (ՎԱԶՔ)



Ըելի

ԱՂՋԻԿՆԵՐ
1.- Ժանա Փիթմըն (Աւստրալիա) 53" 22
2.- Սանտրա Կլովըր (Մ. Նահանգներ) 53" 65
3.- Եուլիա Նոսովա (Ռուսիա) 53" 71

Ստորեւ՝ մետալներուն դասաւորումը.


	ՈՍԿԻ ԱՐՄ.	ՊՐՈՂՁ	
Մ. Նահանգներ	4	4	2
Ռուսիա	4	3	4
Պիլիպին	3	1	3
Եթովպիա	2	2	1
Շուէտ	2	1	1
Քուպա	1	1	0
Հար. Աֆրիկէ	1	1	0
Քանադա	1	0	1
Իտալիա	1	0	2
Աւստրալիա	1	0	0
Էթիոպիա	1	0	0
Լիբիան	1	0	0
Մեքսիք	1	0	0
Մարթ	1	0	0
Մոնթենեգրո	1	0	0
Լեհաստան	1	0	0
Քաթար	1	0	0
Սենթ Քիթց	1	0	0
Ֆրանսա	0	2	2
Հունգարիա	0	2	0
Ժամայա	0	2	1
Գերմանիա	0	1	1
Բրիտանիա	0	1	1
Յունաստան	0	1	1
Սպանիա	0	1	1
Քամբուճ	0	1	0
Չեխիա	0	1	0
Ալբի	0	1	0
Քինիա	0	1	0
Թրինիտատ	0	1	0
Ուրուգուայ	0	0	4
Պանամա	0	0	1
Չինաստան	0	0	1
Ճափոն	0	0	1
Ղազախստան	0	0	1
Սենեկալ	0	0	1

ՇԱԼՔԷ, ՓԵՐՈՒՃԻԱ ԵՒ ՎԻԱՐԷԱԼ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻՆ

ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի ՄՐՅԱՇԱՐՔԻՆ

«Ինթերթիօ» Ֆուտբոլի մրցաշարքին աւարտակա-
նի դարձի մրցումներուն Շալքէ, Փերուճիա եւ Վիարէ-
ալ պարտութիւն չկրելով իրենց մրցակիցներէն, ապա-
հովեցին

ՀՐԱՄԱՐԱԾ Կ'ԸԼԼԱՅԻ...



ԼՈՒՏՈՆ, 28 (ԱՅՓ).- Բրիտանիոյ վարչապետ Թոնի Գլեյր, որ իր քաղաքական կեանքի մեծագոյն տաճարայինը մէկը կը դիմագրաւէ, հետաքննիչ առեւտրի մը դիմաց յայտարարեց, որ ինք հրաժարած կ'ըլլար, եթէ իսկապէս կառավարութիւնը շինծու տեղեկութիւններով «պատուաստած» ըլլար Իրաքի պէնթըրոն պատնայիքի մասին հրապարակուած տեղեկագիրը:

Գլեյր, որ կը հարցաքննուի պէնթըրոն մասնագետ Տէյվիտ Քէլիի մահուան ծայրերուն մասին, տրամադրեց ամբողջական պատասխանատուութիւնը գիտնականին անունը խորհրդարանական երկու յանձնախումբերուն բացառաբար տրուելու: Գլեյր պնդեց, որ ինք արտօսած է, որ յանձնախումբերու փոխանցումը, թէ Քէլիին է աղբիւրը «Պի. Պի. Սի.»-ի կողմէ հրապարակուած լուրին: «Պի. Պի. Սի.» քաղաքական փոթորիկ մը բարձրացուցած էր հրապարակելով լուր մը, որ կ'ըսէր, թէ կառավարութիւնը շինծու փաստերով պատուաստած է գաղտնի պատասխանները կողմէ մշակուած տեղեկագիրը՝ արագացնելու համար Իրաքի դէմ պատերազմի որոշումը: Ակնարկութիւնը կ'երթար յատկապէս տեղեկագիրին այն բաժինին, ուր նշուած էր, թէ Սատուած Հիւսէյն Կադէիլիութիւնն ու կարողութիւնը ունի 45 վայրկեանի մէջ հաւաքական քանդումի հրթիռներ արձակելու:

Գլեյր ըսաւ, որ ինք պատասխանատու է Քէլիի անունը հրապարակելու որոշումին եւ կը հաւատայ, որ ճիշդ որոշում տուած է: Գլեյր, որ հանդարտօրէն կը պատասխանէր հարցումներուն, իրիտէլ տուաւ, որ հակառակ Քէլիի մահուան, իր խիղճը հանգիստ է: Ան շեշտեց, որ Սեպտեմբերին հրապարակուած տեղեկագիրը ամբողջական պատասխաններով վայելած է գաղտնի պատասխանները պատասխանատուներուն եւ թէ կառավարութիւնը որեւէ յանձնարար տեղեկութիւն չէ անցնուցած:

Դատարանին մուտքին, Գլեյր դիմաւորուած էր քանի մը հարիւր ցուցարարներու կողմէ, որոնք կը բողոքէին պատերազմին դէմ ու արդարութիւն կը պահանջէին Քէլիի հարցին համար:

(ԱՅՓ)

ԽԾԿՈՆՔԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Ծարուակուած 5րդ ԷջԷԳ

Խժկոնքի վանքը ըլլալով մեր ժողովուրդի կարեւորագոյն վանքերէն մէկը՝ շուրջ հազար շորս հարիւր տարի ծառայած է իբրեւ հոգեւոր կեդրոն եւ աւելի քան հազար տարի գործած է իբրեւ շրջանի գիր ու գրականութեան կարեւոր կեդրոն:

Իսկ այժմ գտնուելով Թուրքիոյ մէջ՝ հետու մնացած է ուսումնասիրողներու ձեռնհասութեանն էլ եւ անոր ներկայ վիճակին մասին մերթ ընդ մերթ կը ստացուին սահմանափակ տեղեկութիւններ:

Խժկոնքի վանքը, որ հիմնադրուած է Բաղրատունեաց թագաւորութեան շրջանին, կը գտնուի պատմական Այրարատ նահանգի Շիրակ գաւառին մէջ, Անի քաղաքէն 40 քմ. հարաւ-արեւելք, Տեկուր գետակի կիրճի ձախափնեայ լանջին, հսկայ ժայռաբեկորի մը վրայ: Մինչեւ կործանուած իր հինգ եկեղեցիներուն պատճառով թրքերէն կոչուած է Պեշքիլիսէ:

Ան բանուկ եղած է մինչեւ շրջանի քեմալական բանակներու կողմէ գրաւուելը, այսինքն՝ 1920 թուական, իսկ 1921ին Մոսկուայի համաձայնագրին համաձայն, երբ տարածքը յանձնուած է Թուրքիոյ՝ Խժկոնքի վանքը դարձած է ամառի:

Վանքին բոլոր կառուցները կանգուն վիճակի մէջ էին մինչեւ 1962, երբ վանքի բոլոր շինութիւնները պայթեցուցան թրքական բանակին կողմէ: Պայթեցումին պատճառով հիմնովին կործանեցան բոլոր կառուցները՝ բացի Ս. Սարգիս եկեղեցիէն, որուն վարի մասի պատերը քանդուելով եւ ճեղքուածներ յառաջանալով հանդերձ՝ չ'աւերուիր եւ մինչեւ օրս գարմանալիօրէն կանգուն մնացած է:

Խժկոնքի վանքի եկեղեցիներէն երեքը (Ս. Աստուածածին, Ս. Կարապետ եւ Ս. Սարգիս) հարաւէն հիւսիս, կողք-կողքի կը գտնուին, իսկ Ս. Ստեփանոս եկեղեցին անոնցմէ քիչ մը հեռու: Ղէպի արեւելք կը գտնուի: Հինգերորդ եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչն է, որ կառուցուած է արեւելեան մասին մէջ՝ անոնցմէ 300-350 մեթր հեռու: Ս. Սարգիս եկեղեցին կառուցուած է 1027-1033 թուականներուն:

ԻՐԱՆ ՊԻՏԻ ԳՈՐԾԱԿՑԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ՈՒԺԱՆԻԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՇԵՏ

ԿԸ ՀԱՍՏԱՏԵ ԽԱՐԱԶԻ

Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Նարազի յայտարարեց, որ իր կառավարութիւնը պատրաստ է բանակցութիւններու սկսելու կորիզային Ուսանիլի Միջազգային Գործակալութեան հետ՝ կորիզային կեդրոններուն քննութիւններուն հարցին մասին եւ կը խոստանայ չ'ինչիզ գործակցութիւն մը, յայտնեցին ճափնական աղբիւրները:

Նարազի, որ ձափոն թմանած էր Չորեքշաբթի երեկոյեան Հնդկաստան ու Չինաստան այցելութիւններէն ետք, նախագահ Մոհամադ Նախաբեհիին նամակ մը յանձնեց վարչապետ Ճոնիչիւրո Քոյդուսթի: Նամակին բովանդակութիւնը թէեւ չ'հրապարակուեցաւ, բայց ցեւայնպէս յստակ էր, թէ անիկա կ'առնչուի կորիզային հարցին:

Նարազի այցելութեան նախօրեակին ՄԱԿի տեղեկագիր մը յայտնած էր, թէ քննիչներ Իրանի կորիզային գործարաններուն մէջ գտած են նիւթեր, որոնք անհրաժեշտ չեն կորիզային ուսանիլի թնկալաբանութեան ծրարներուն համար:

Քոյդուսթի հետ տեսակցութեան աւարտին, Նարազի ըսաւ, որ Իրան կ'ուզէ գործակցիլ կորիզային Ուսանիլի Միջազգային Գործակալութեան հետ, ինչպէս նաեւ կ'ուզէ ձեռնարկել բանակցութիւններու ստորագրելու համար ուսանիլի խաղաղ գործածութեան համաձայնագրին մէջ յաւելուածը, որ ճամբան պիտի բանայ միջազգային քննիչներու կողմէ անանկալայցելութիւններու եւ քննութիւններու դիմաց: Նարազի մաղթեց, որ Միջազգային Գործակալութիւնը արշեստավար թու առարկական մօտեցում ունենայ եւ չօգտագործուի քաղաքական նպատակներու համար:



Իրանցի նախարար Կամալ Նարազի պաշտօնատարներու հետ տեսակցութիւններու ընթացքին շեշտած է, թէ Թեհրան որեւէ մտադրութիւն չունի կորիզային զէնքեր պատրաստելու: (ԱՅՓ)

ԹԵՀՐԱՆ ՓՈՒՍԴԱՐՉ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵ ՈՒՍՇԻՆԿԹԸՆԻ

Թեհրան, 28 (ԱՅՓ).- Իրան պատճառ չի գտնել օժանդակելու Միացեալ Նահանգներուն՝ «Քայտա»-ի դէմ յայտարարուած պատերազմին, այնքան ատեն որ Ուսանիլի թնկալաբանութեան զինեալ ընդդիմադրութիւնը, յայտնեց արտաքին գործոց նախարար Քամալ Նարազի:

«Մի. էն. էն»-էն պատկերասփռուած հարցազրոյցի մը ընթացքին, Նարազի ըսաւ, որ գործակցութիւնը փոխադրած կ'ըլլայ, հետեւաբար Թեհրան որեւէ պատճառ չունի Ուսանիլի թնկալաբանութեան հետ գործակցելու, եթէ այս վերջինը պիտի չ'գործակցի իրանցիներուն հետ: Նարազի կ'ակնարկէր Մոհամադ Քամալի զինեալ շարժումի հետեւորդներուն ներկայութեան Իրաքի մէջ: Ան ըսաւ, որ ամերիկացիները գործակցութիւն չ'ըզգարեցին եւ չ'ստանձեցին զինեալները, որոնք յարձակումներ կը գործեն Իրանի վրայ:

Քանի մը շարքի առաջ Ուսանիլի թնկալաբանութեան հաստատեց ընդդիմադիր շարժումին գործունէութեան Միացեալ Նահանգներուն մէջ, սակայն Թեհրան դժգոհ մնաց, որովհետեւ Իրաքի մէջ զինեալ շարժումին գործունէութիւնը կը մնայ անսանձ:

Իրան յայտարարած է, որ ձեռնարկուած է «Քայտա»-ի ծայրայեղականները, սակայն ցարկ կը մերթ է գանձուի Միացեալ Նահանգներու յանձնել:


ՖՐԱՆՍԱ ԿԸ ՇԵՇՏԵ ԻՐԱՔԻ ՄԵՉ ՄԱԿԻ...

Ծարուակուած Ա. ԷջԷԳ

Կած են, սակայն անոնց դէմ արձակուած են ձեռնառուներ եւ փոքր թիւներ: Բրիտանական աղբիւրներ յայտնեցին, որ յարձակումին պատճառը կրնայ ըլլալ երկու իրաքցիներու ձեռքակալութիւն մը, որ տեղի ունեցած էր Մալան նահանգի Ալի Շարքի անտառին մէջ: Միւս կողմէ, ամերիկեան ուժեր 17 հոգի ձեռքակալեցին Պաղտատի հիւսիսը, ուր արշաւի մը ձեռնարկած են Սատամ Հիւսէյնի հետեւորդներ եւ աւազակներ ձեռքակալելու համար:

ՔԱՆԻ ՄԸ Հարիւր բարեկամներ եւ հարազատներ երէկ ժընեի մէջ ներկայ եղան ՄԱԿի Մարդկային Իրաւանց Գործակալութեան յանձնակատար եւ Իրաքի մէջ ՄԱԿի ներկայացուցիչ Սեթիօ Վիէրա Տէ Մելլոյի յուզարկուեցութեան: Տէ Մելլո սպաննուած էր Օգոստոս 19ին, ՄԱԿի Պաղտատի նստավայրին մէջ, որ ահաբեկչական գործողութեան մը թիրախ դարձած էր: (ԱՅՓ)

ԱՆՉՐԵԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԿԱՍՈՒՐՉ ՄԸ ՓՈՒԼ ԿՈՒ ԳԱՅ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԵՉ



Հնդկաստանի մէջ երէկ 21 երեխաներ եւ երկու չափահասներ սպաննուեցան, երբ կամուրջի մը մէջ հատուածը փուլ եկաւ, որուն հետեւանքով դարձողական փոխադրական մը եւ չորս ինքնաշարժներ ինկան գետին մէջ: 1983ին կառուցուած եւ 325 մեթր երկարութեամբ կամուրջին հիմքերը տկարացած էին վերջերս տեղացած տեղատարափ անձրեւին պատճառով: Փրկարար խմբակներ յաջողած են փրկել 28 քաղաքացիներու, ներառեալ 24 աշակերտներու կեանքը: Անոնց օժանդակած են ձկնորսներ եւ դէպքին վայրը ժամանած մօտ 900 քաղաքացիներ:

ԿԱՐԸ ԼՈՒՐԵՐ

- ՊէՅՃԻԿԿ.- Չինաստանի մէջ երթեկելի երկու մեծ արկածներ 27 գոհ եւ 13 վիրաւոր պատճառած են Շահակի եւ Կանգու նահանգներուն մէջ:
- ՏՈՒՇԱՆՊԵ.- Ռուսիոյ սահմանապահ ուժերը բնագրեցին Վրաստանի Թոնի Կարտաւի Տաճիկիստան - Աֆղանիստան սահմանագիծին վրայ: Տաճիկ պատասխանատուներ յայտնեցին, որ ռուս զինուորները բախում ունեցան մաքսանիւստուրու հետ, որոնք դէպի Աֆղանիստան փախուստ տուին:
- ԱԹԷՆՔ.- Թրքական եւ յունական բեռնատար երկու նաւեր իրարու բախեցան Եգէականի մէջ, Սամոս կղզիին մօտ: Չորս չարձանագրուեցան:
- ԲՈՒՄՊՈ.- ՄԱԿ 3,2 միլիոն տոլար օժանդակութիւն յատկացուց Սրի Լանքայի՝ թափ տալու համար ականաւոր մաքրարշախի: Սրի Լանքայի ամառաօրին աւելի քան 1,5 միլիոն ականաւոր «ցախուած» են տալիս ապի տարիներուն:
- ԳԱԶԻՐԷ.- Ազհարի կրօնապետ շէյխ Մոհամադ Մալիք թանթաւի պաշտօնանկ ըրաւ այլ կրօնաւոր մը, որ իսլամական երկիրներուն կող ուղղուած էր պլյուրթիք ենթարկելու Իրաքի փոխանցման հանգրուանի իշխող խորհուրդը, որ նշանակուած է ամերիկացիներուն կողմէ: (ԱՅՓ)

ՇԱՍԱՍ - ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ԻԾԽԱՆՈՒԹԻՒՆ...

Ծարուակուած Ա. ԷջԷԳ

Նութեան այս քայլը որոշ պաղեստինցիներու մօտ յառաջացուց բողոքի ալիք մը: Այդ միութիւններէն օգտուող մօտ երկու հազար պաղեստինցիներ բողոքի ցուցով մը արտայայտեցին իրենց գայրոյթը:

● ՊԱՂԵՍԻՆԵՅԻ ոստիկաններ Համասի անդամներու վրայ կրէն բացին կազայի հիւսիսային շրջանին մէջ, ուրկէ իսլամական զինեալները հրթիռներ արձակած էին իսրայէլեան Աշքետու քաղաքին վրայ:

● 13 պաղեստինցիներ վիրաւորուեցան Նապլուսի մէջ, ուր իսրայէլեան ուժեր բախում ունեցան պաղեստինցիներու հետ:

● ՊԱՂԵՍԻՆԵՅԻ մը սպաննուեցաւ եւ երեք ուրիշներ վիրաւորուեցան երէկ գիշեր, երբ իսրայէլեան ուղղութիւնը հրթիռներ արձակեցին Կազայի արուարձաններէն մէկուն վրայ: Սպաննուած պաղեստինցիներ՝ Համասի Գազայի, անդամ է Համասի զինեալ թիւին՝ «Իզզէտ»-ին Գասամի Զոկատներուն: (ԱՅՓ)

ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ ՄԵՉ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹ ԶԱՏՈՒԿ ԳԻՆԵՐՈՎ ԾԱԽՈՒ ԵՆ.-

ԱՐԻՆ - ՀԱՍՏԱԼԻՔ

- ▶ Խանութներ 30 եւ 40 քառ. մեթր
- ▶ Սրահներ 175 եւ 200 քառ. մեթր

ԱՐԱԳԱՍԻ ԾԵՆԵՐ

- ▶ Խանութներ 30 եւ 50 քառ. մեթր
- ▶ Մթերանոց 300 քառ. մեթր

ԱՑԵՏԻ ԾԵՆԵՐ

- ▶ Գրասենեակ 80 քառ. մեթր

Յաւելեալ մանրամասնաց համար հեռաձայնել՝ 03 / 618806 թիվն: